Azg
armenian daily

1 ՄԱՐՏ 2000 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 37 (2005)

Լրատվամիջոցները դիմում են օրենսդրական նախաձեռնության

ԵՐԵՎԱՆ, 29 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ֆինանսավորման բացակայության, գործունեության համար անբարենպաստ պայմանների եւ հանրաքեսությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի հետեւանքով գնալով վատթարանում է Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների կացությունը, դրանցից ոմանց անգամ սպառնում է փակվելու վտանգը: Այս խնդիրները քննարկվեցին փետրվարի 29-ին Երեւանի Ժուռնալիստի տանը կայացած հանդիպմանը, որին մասնակցում էին Հայաստանի մի շարք ազդեցիկ լրատվամիջոցների ղեկավարներ: Հանդիպմանը որոշվեց մշակել զանգվածային լրատվամիջոցներին պետական աջակցության մասին օրենքի նախագիծ, որի համար հիմք կծառայի արդեն մի քանի տարի Ռուսաստանում գործող նմանօրինակ օրենքը: Հանդիպման մասնակիցները որոշեցին կոչ անել բոլոր լրատվամիջոցներին՝ մասնակցելու համապատասխան օրենքի ստեղծմանը, նախապես ծանոթանալու համար նրանց տրամադրելով ՌԴ օրենքի տեքստը: Խնդրի հետագա քննարկման համար մարտի 10-ին կանցկացվի ՁԼՄ-ների ղեկավարների ավելի ընդլայնված հանդիպում: Նշենք, որ ՁԼՄ-ների մասին ՀՀ օրենքը չի ենթադրում անմիջական ֆինանսավորում պետության կողմից, սակայն նախատեսում է լրատվամիջոցների գործունեության պայմանները դյուրացնող մի շարք արտոնությունների տրամադրում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Կառավարության փոփոխություններ առաջարկելը ես չեմ համարել դիրքային պայքար»

Վարչապետ Արամ Սարգսյանի մեկնաբանությունն «Ազգին»

ՆԱՐԵՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

– Պրն վարչապետ, Ձեզ առընթեր կուսակցական խորհրդի ստեղծումը եւ դրա արդյունքում կառավարության կազմի եւ կառուցվածքի փոփոխությունը առավել ամրակայե՞ց Ձեր դիրքերը, բուլացնելով նախագահինը, թե՞ հակառակը, նախագահը հնարավորություն ստացավ ծախողման դեպքում ողջ պատասխանատվությունը թողնել գլխավոր խաղացողի՝ տվյալ դեպքում վարչապետի եւ նրան աջակցող քաղաքական ուժերի վրա:

– Կառուցվածքային փոփոխություններ կատարելը եւ նոր նախարարներ առաջարկելը ես չեմ համարել ուղղակի դիրքային պայքար, եթե նման կերպ համարեի, այլ առաջարկներ կանեի: Ձեմ կարծում, որ նախագահի կամ իմ դիրքերն ուժեղանալ-թուլանալու խնդիր կա այս հարցում: Դրա համար քաղաքական խորհուրդը ստեղծվեց, որ ինչ-որ կերպ բոլորի՝ թե համախոհների, թե



այլախոհների ուժերը միացնելով, փորձենք վստահության մթնոլորտ ստեղծել եւ դուրս գալ իրավիճակից: Նախագահի հետ քննարկվել են եւ կառավարության կառուցվածքը, եւ թեկնածուները, որոշակի հարցերում ունեցել ենք այլ կարծիքներ, բայց հիմնականում, որպես այդպիսին, պայքար չի եղել:

Տես էջ 3

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսը Մոսկվայում

ՄՈՍԿՎԱ, 29 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐԲ: Այսօր առաջին պաշտոնական երկօրյա այցով Մոսկվա ժամանեց Ամենայն հայոց Վեհափառ հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը: Ամենայն հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի II-ը, ինչպես նաեւ Սոլնեչնոգորսկի միտրոպոլիտ Սերգին, Իստրինի արքեպիսկոպոս Արսենին, Մոսկվայում Բուլղարիայի, Անտիոքի եւ Ալեքսանդրիայի ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ինչպես Մոսկվայից հաղորդում է «Սնարքի» թղթակիցը, Սուրբ Դանիլի վանքի պատրիարքարանում հայ առաքելական եկեղեցու եւ Ուղղափառ եկեղեցիների առաջնորդներն ընդլայնված կազմով երկկողմ բանակցություններ են վարել: Զրույցի ավարտից հետո Գարեգին II-ն ու Ալեքսի II-ը հանդես են եկել հայտարարությամբ, որում, մասնավորապես, նշվում է, որ հայ առաքելական եկեղեցին եւ Ռուսաստանի ուղղափառ եկեղեցին հանդես են գալիս հոգուս Հայաստանի եւ Ռուսաստանի ժողովուրդների եղբայրության, համագործակցության փոխադարձ հարգանքի: «Մեր եղբայրական փոխըմբռնման թելերը միահյուսված են, եւ մեր ժողովուրդների ու եկեղեցիների համագործակցությունը էլ ավելի կամրապնդի հայ-ռուսական բարեկամությունը», ասել է Գարեգին II-ը: Ալեքսի II-ն իր հերթին նշել է, որ համագործակցությանն ու փոխըմբռնմանը երկու եկեղեցիների նվիրվածության եւս մեկ հաստատումն են նրանց առաջնորդների ամենաջերմ անձնական հարաբերություններն ու բարեկամությունը:

Մոսկվայի բանակցությունների արդյունքում Ալեքսի II-ը եւ Գարեգին Բ-ն ձեռք են բերել պայմանավորվածություն Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու եւ հայ առաքելական եկեղեցու միջեւ աստվածաբանական երկխոսություն սկսելու շուրջ: Ավելին, հոգեւոր պետերը որոշում են կայացրել հոգեւոր ճեմարանների ուսանողների եւ եկեղեցական պատվիրակությունների փոխանակման ավանդույթը վերականգնելու մասին: Այդ առնչությամբ հարկ է նշել, որ ինքը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը, ավարտել է Զագորսկի Հոգեւոր ակադեմիայի ասպիրանտուրան:

Վարդանանց տոն մարտի 2-ին

Մարտի 2-ին, Հայ առաքելական եկեղեցին կտոնի Սբ. Վարդանանց՝ 451 թ. Ավարայրի ճակատամարտում հանուն սեփական հավատի պահպանման եւ հայ ժողովրդի լինելիության համար նահատակված Վարդան զորավարի եւ բոլոր 1036 մարտիրոսների տոնը: Այդ օրը հայոց բոլոր եկեղեցիներում կմատուցվի Սբ. Պատարագ: Վարդանանց տոնի օրը նաեւ Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսի անվանակոչության օրն է: Հավատս Սբ. Պատարագի տեղի կունենա Հայրապետական մաղթանք:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՍԱՅՐ ԱՔՈՈՒ

Հայաստանի էներգետիկ համակարգի, «Հայռուսգազարդի», «Իտեռայի» եւ այլոց մասին

Մանրամասներ ըստ «Հայռուսգազարդ» ՀՁ վարչության նախագահ Ռ. Ադոնցի

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՅԱՆ

«Հայոց հարցը» դարձած էներգետիկ բաժնիչ ցանցերի սեփականաշնորհման շուրջ բարձրացված աղմուկը հասարակական, մամուլի շրջանակներում ու ԱԺ-ում հրթայականորեն օրակարգի ու քննարկման թեմա դարձրեց վաղուց կատարված ու կարծես թե մոռացված մի հարց՝ 1995-96 թթ.-ին «Հայռուսգազարդ» համատեղ ձեռնարկության ստեղծման պատմությունը: «Ազգն» իր փետրվարի 19-ի համարում մանրամասն անդրադարձել էր բազմաթիվ հարցականներով այդ մութ պատմությանը: Հրապարակ հանված խնդիրն այն էր, որ տեղի է ունեցել «սվերային» սեփականաշնորհում, որի արդյունքում «Ռուսգազարդը» հայկական կողմի հետ, կիսելով բաժնետոմսերի 45 տոկոսը, տիրացել է ՀՀ գազի ողջ համակարգին, փոխարենը պարտավորվելով Հայաստանին տրամադրել համակարգի գնահատման արժեքի՝ 270 մլն-ի դիմաց տարեկան մոտ 600 մլն խմ գազ: Սակայն աղմուկի հիմնական պատճառը ոչ այնքան այն էր, որ սեփականաշնորհումը կատարվել է առանց խորհրդարանի վարվեցման, նախկին նախագահի մեծահոգության արդյունքում, որքան այն, որ 96 թվականից ՀՁ 10 տոկոս բաժնետոմսեր ձեռք բերած ռուսական գազի մենաշնորհման մասնակարարն է դարձել «Իտեռա» կորպորացիան, այն նույն «Իտեռան», որի անունը ամենահաճախն է հոլովվում որպես էլեկտրի հավանական սեփականատեր, ինչը եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու էլեկտրի մրցույթին մասնակից արեւմտյան ընկերությունների «թիկուին կանգնած» տերությունների կողմից գնահատվում է խիստ բացասական: Հիմնական մտավախությունն այն է, որ արդեն իսկ «Հայռուսգազարդի» սեփականատեր ու մասնակարար «Իտեռային» հանձնելով նաեւ բաժնիչ ցանցերը, ՀՀ ռազմավարական էներգետիկ համակարգում ստեղծվում է բացարձակ մոնոպոլիա՝ իր արդեն հայտնի վտանգներով: Քանի որ **«Ազգը»** վերջերս է էներգետիկ համակարգի շուրջ կատարվող խմորումների մասին մինչեւ վերջ ու համակողմանի լուսաբանողի առաքելությունը, ներկայացնում ենք նաեւ «Հայռուսգազարդի» տեսակետներն ու պարզաբանումները:

«Ոչ մի քողարկված սեփականաշնորհում էլ չի կատարվել»

Մեր հարցին ի պատասխան այսպես ասաց «Հայռուսգազարդի» վարչության նախագահ Ռոլանդ Ադոնցը ու մանրամասն պարզաբանեց, այն, ինչ տեղի է ունեցել ՀՁ-ի ստեղծման ժամանակ, կատարվել է միմիայն բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի շրջանակներում: Ինչ վերաբերում է գազի համակարգի գնահատված արժեքին՝ 270 մլն դոլարին, ապա, պրն Ադոնցը խորհուրդ տվեց հրավիրել մի որեւէ միջազգային աուդիտորական ընկերության ու պարզել, թե իրականում քայքայված ու ավերված ՀՀ գազի համակարգը (որը կառուցվել է 30-40 տարի առաջ) ինչքա՞ն կգնահատվի:

Տես էջ 3

Նոր ձերբակալված

ԵՐԵՎԱՆ, 29 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունն իրականացնող ՀՀ գլխավոր դատախազության կողմից փետրվարի 28-ին ձերբակալվել է Երեւան քաղաքի բնակիչ, ՀՀ ՆԳՆ աշխատակից Արմեն Ռազմիկի Հարությունյանը: Նա կասկածվում է 1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեռորիստական ակտ կատարելու հանգամանքները հայտնաբերելու եւ թաքցնելու մեջ: Այս մասին հայտնեցին ՀՀ գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնից:

«Միայն ցեղասպանությունը ճանաչելով թուրքերը տեղ կգրավեն առաջադեմ ազգերի ընտանիքում»

ՍՏՍՄԲՈՒԼ, 29 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Միչիգանի համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոնի, Թեքեյան մշակութային միության եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության ջանքերով մարտի 10-ին կազմակերպվելու է դասախոսություն «Հայկական ցեղասպանությունը եւ թուրքերի լռությունը» թեմայով, որն ընթերցելու է թուրք հանրահայտ հետազոտող Թաներ Աքչամը:

Ըստ թուրք հետազոտողի, Թուրքիայի այսօրվա պրոբլեմները ծագում են հայկական ցեղասպանությունը ժխտելուց, ինչի հետեւանքով թուրքերը լիարժեք չեն պատկերացնում իրենց պատմությունը եւ կոնֆլիկտային վիճակում են գտնվում սեփական անցյալի նկատմամբ: Նա նշում է, որ միայն ցեղասպանությունը ճանաչելով՝ թուրքերը պատվավոր տեղ կգրավեն առաջադեմ ազգերի ընտանիքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գոկեստների մեջ՝ շռայլ, թերացումների դեպքում՝ ժլատ

Վճռաբեկ դատարանի նախագահին ազդարարում է, որ դատական համակարգը կայացել է

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Դատարանները, կարելի է ասել, շատ լավ են աշխատել արդարադատությունը ճիշտ իրականացնելու առումով, որովհետեւ դատավճիռների փոփոխումը, բեկանումը շատ փոքր տոկոս է կազմում», փետրվարի 29-ին հրավիրված մամուլի ասուլիսում հասարակությանն ավետեց վճռաբեկ դատարանի նախագահ Հենրիկ Դանիելյանը: Նոր դատական համակարգի արդյունավետ աշխատանքը նա պայմանավորեց վճիռներն ու դատավճիռները փոփոխելու եւ բեկանելու ցածր տոկոսով, չմոռանալով շեշտել, որ 98 թ. համեմատությամբ քրեական գործերի քանակի տարբերություն գրեթե չկա, իսկ քաղաքացիական գործերի քանակը զգալի ավելացել է:

Թվական վիճակագրության հարցում վճռաբեկ դատարանի նախագահին օգնեցին վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատի նախագահ Արման Մկրտումյանը եւ քրեական ու զինվորական գործերով պալատի նախագահ Մհեր Խաչատրյանը: Արման Մկրտումյանը տեղեկացրեց, որ անցնող մեկ տարվա ընթացքում քաղգործերով կայացվել է 32232 վճիռ, որից 8000-ը վերաբերում է ԱԺ եւ տեղական ինքնակառավարման ընտրություններին: Դատարանների աշխատանքի ուսումնասիրման համար հիմք ծառայած 24185 վճիռներից վերաքննիչ դատարան բողոքարկվել է 1557-ը, որից միայն 269 գործով է այլ բովանդակությամբ վճիռ կայացվել: Տնտեսական գործերով վերաքննիչ դատարան բողոքարկվել է 220 վճիռ, որից այլ բովանդակությամբ վճիռ է կայացվել 51 գործով: Վերաքննիչ դատարանի 74 վճիռ է բողոքարկվել վճռաբեկ դատարան, որից բեկանվել է 35-ը: Ամփոփելով առաջին աստիճանից ստացված վիճակագրական տվյալները՝ պրն Մկրտումյանը գոհունակությամբ նշեց, որ վճիռների կայունությունը կազմում է 98,6 տոկոս: Վերաքննիչ դատարանում քաղգործով կայունությունը կազմում է 95,6 տոկոս, իսկ տնտեսական գործերով 98,9 տոկոս (կայացված 93 վճիռներից բողոքարկվել է 6-ը, որից 1-ն է բեկանվել):

Տես էջ 2

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Բյուջեն թի՞վ է, թե՞ խաղախականություն

Բարեփոխված կառավարության եւ նոր նախարարների առաջին մկրտությունը

«Բյուջեն թիվ չէ, բյուջեն խաղախականություն է, իսկ այս բյուջեն հնարավորություն տալի՞ս է որեւէ ոլորտում բարեփոխումների մասին խոսելու», միաժամանակ ե՛ւ արձանագրեց, ե՛ւ հարցրեց «Միասնություն» խմբակցության անդամ, պատգամավոր Գալուստ Սահակյանը երեկ Ազգ առահերթ նիստում, երբ պատգամավորները ճնարկում էին 2000 թ. պետբյուջեի մասին օրենքի նախագիծը՝ վավերացնել-չվավերացնելու խնդիրը: Պատասխանը միանշանակ բացասական է, եւ օրվա հերոս, արդեն միացյալ՝ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Լեւոն Բարխուդարյանն անկեղծորեն ընդունեց. «Մենք ունենք մեծ ծրագրեր, բայց փոքր հնարավորություններ: Երբ գրում են, թե ձեր առաջարկները չեն ընդունվել, չենք գտնում, թե դրանք ճիշտ չեն, սխալ են, ո՛չ, պարզապես հնարավորություններ չկան: Բարեփոխումների ծրագրերը կիրականացնենք սեփականաշնորհման միջոցների հաշվին»: Աժ-ն կառավարությանն ուղղել էր 151 առաջարկ, որից մասնակի կամ ամբողջությամբ ընդունվել է 29, ի հեւեւանս՝ բյուջեում վերաբաշխվել է 950 մլն դրամ: Եկամտային, ծախսային հոդվածներն անփոփոխ են՝ 201,8 մլրդ դրամ եկամուտ, 254,1 մլրդ ծախսեր, 52,3 մլրդ բյուջեի պակասուրդ: Այս տարի նախատեսվում է աղահովել տնտեսության 6 տոկոս աճ, 5 տոկոս սղաճ, փոխարժեքը՝ 547 դրամ 1 դոլարի դիմաց:

Իբրեւ հիմնական զեկուցող Լեւոն Բարխուդարյանը հավաստիացրեց, որ արդեն ուրվագծվում է Հայաստանի զարգացման նաեւ միջնաժամկետ ծրագիրը մինչեւ 2002 թ., եւ մեր տնտեսության մեջ որոշակի փոփոխություններ են հաստնանում: Օրվա հայտնությունը բանկային տոկոսադրույքների նվազումն է 45-ից 22 տոկոս, ինչը Լեւոն Բարխուդարյանի համոզմամբ, կխթանի ներդրումների հնարավորությունը, եւ բանկերն իրենց ազատ գումարները կներդնեն արտադրության ոլորտում: ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանն իր ելույթում եւս անդրադարձավ ֆինանսական ու մակրոտնտեսական կայունությանը, որը պետք է տեղափոխել միկրոտնտեսություն: Նա փաստեց, որ փողի գինը Հայաստանում ընկել է: Ռեալ տոկոսադրույքը հասել է 21 տոկոսի, ՊԿՊ-ների տուկայից բանկերի ազատ միջոցներն իրոք կարող են ներհոսել դեպի արդյունաբերական ձեռնարկություններ, պետք է միայն ճիշտ քաղաքականություն վարել եւ թույլ չտալ պետական միջոցների փոշիացում: Տիգրան Սարգսյանն առաջարկեց ընտրել 5–6 զերակա ձեռնարկություն, եւ դրանից հետո դիմել բանկերին՝ ասելու համար, որ կառավարությունը պատրաստ է ամեն ինչի, որպեսզի վերագործարկի այդ ոլորտները: Բանկերը կօժանդակեն: Նա բերեց կոնկրետ օրինակներ, թե ինչպես հաստեագրված բանկային ներարկումները բերել են լուրջ արդյունքների: Միաժամանակ անհրաժեշտ է իրատես լինել եւ 60 մլն դոլար ներուժ ունեցող բանկային համակարգից չպահանջել 5–6 մլրդ դոլարի վարկավորում: Տիգրան Սարգսյանն ի մի բերեց. «Հողեշտությունը հանենք մեր միջից, չնայած համընդհանուր աղաչային եւ հուսախաբությանը, մենք իրավունք չունենք հիասթափվել, պետք է աշխատենք»: ԿԲ նախագահը հայտնեց իրենց որոշման մասին՝ 771 մլն դրամով կրճատել ԿԲ ծախսերը: Աժ-ին նա առաջարկեց գործուն մասնակցել տնտեսական խաղաքականությանը, քանզի կան որոշներ, որոնք դուրս են ե՛ւ օրենսդրական կարգավորման դաշտից, ե՛ւ խորհրդարանական վերահսկողությունից, ինչպես օրինակ, էներգետիկ համակարգը, ուր 110 մլրդ դրամի կրեդիտորական պարտքեր կան: Տիգրան Սարգսյանը հատկապես կարեւորեց սեփականաշնորհման միջոցների օգտագործումը, այս միջոցներն առաջին անգամ ընդգրկված չեն պետբյուջեում: Աժ որոշմամբ, կառավարությանն ամեն եռամսյակ թույլ է տրվել սեփականաշնորհման մուտքերից 2,8 մլրդ դրամ օգտագործել կապիտալ ծախսերի համար, սակայն Տիգրան Սարգսյանը պնդեց, որ այդ գումարները ծախսվում են ոչ թե կապիտալ, այլ ընթացիկ ծեղքվածքները ծածկելու համար, ինչն անթույլատրելի է: Սեփականաշնորհման գումարները պետք է ներդրվեն Աժ-ի կողմից եւ ոչ թե

այս ուղերձի կոչերով՝ ինքն իրե՞ն, թե՞ Աժ-ին: Եթե ինքն իրեն, ապա անհասկանալի է, եթե Աժ-ին, ապա վիճակն առավել վատ է, քանզի դա նշանակում է, որ գործադիր իշխանությունը չի ընդունում իր լիազորությունների շրջանակը եւ դրա տարբերությունն օրենսդիր մարմնից: Վարդան Խաչատրյանն իրավացի էր՝ բյուջեային ուղերձում նշված է, որ հարկային եկամուտներն իրատեսական են, ուստի ոչ մի ճնշում չի՞ գործադրվի հարկատուների վրա, բայց ո՞րն է մեխանիզմը, որի միջոցով ճնշում գործադրող հարկային տեսուչները, կանխավճար պահանջողներն անպայման կդատվեն կամ հրաժարական կտան: Ուղերձում խոսվում է ժողովրդավարության մասին, կուսակցությունների զարգացման, բայց կուսակցություններին հատկացվելիք 100 մլն դրամն էլ տեղ չի գտել նախագծում. «Ուղերձի կոչերը եւ բյուջեի թվերն անհամատեղելի են»: Այս անհամատեղելիության հորձանուտում էլ խորհրդարանն այսօր կշարունակի բյուջեային քննարկումը նորելուկ եւ հնաբնակ նախարարների հետ, որոնց առաջին մկրտությունը բավական սթափեցնող էր:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

Արդարադատության նախարարը Դավիթ Հարությունյանն է

«Ազգի» երեկվա համարում, կառավարության նոր կազմը հրապարակող հոդվածում վրիպում է թույլ տրվել, ինչի կապակցությամբ հեղինակը հայցում է արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի ներողամտությունը: Հոդվածում սխալմամբ արձանագրվել է, որ Դ. Հարությունյանին փոխարինել է զինդատախազի տեղակալ Արտակ Հարությունյանը, այնինչ հիշյալ միտքն ընդամենը լուրի ձեւով է շրջանառվել ու շրջանառվում: Հավաստիացնում ենք, որ վրիպումը բխել է նախադասության սխալ ձեւակերպումից:

Ա. Բ.

Հրայր եւ Աննա Հովնանյանները հիմնել են ֆոնդ՝ ի հիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի

Ֆոնդի տոկոսներով կվճարվեն զոհված եւ առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաների նպաստները

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերի շրջանակում 1999 թ. մեծանուն բարերար, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Հրայր Հովնանյանը եւ նրա կինը՝ Աննա Հովնանյանը ստեղծեցին մի մնայուն ֆոնդ՝ ի հիշատակ Գարեգին Ա Վեհափառ հայրապետի:

Ֆոնդի տոկոսներով կվճարվեն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի զոհված եւ առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաների նպաստները: Ֆոնդի սկզբնական մայր գումարը 200 հազար ԱՄՆ դոլար է: Հովնանյանները հիմնադրամի գործադիր վարչության հետ պայմանավորվել են, որ երկու տարվա ընթացքում մայր գումարը կավելացվի՝ հասնելով 500 հազար ԱՄՆ դոլարի:

Նկատի ունենալով «Նպաստներ զոհված եւ առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագրի երկարատեւությունն ու շարունակականությունը, հիմնադրամի գործադիր վարչությունը որոշել է ստեղծել 1,5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր մայր գումարով մնայուն ֆոնդեր՝ աղահովելու համար ծրագրի անխափան իրագործումը: Հրայր եւ Աննա Հովնանյանների նախաձեռնությունն առաջին քայլն է եւ, փաստորեն, աղահովում է անհրաժեշտ գումարի մեկ երրորդը: Հիմնադրամի գործադիր վարչությունը, իր երախտագիտությունը հայտնելով բարերարներին, աշխատում է մնացյալ գումարը լրացնելու ուղղությամբ:

ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՍՓՈՓՈՒՄ

Գովեստների մեջ՝ շռայլ, թերացումների դեմքում՝ ժլատ

Սկիզբը էջ 1

«Թվերը մեզ ստիպում են խոսել»

Ի տարբերություն քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատի նախագահի, վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի նախագահ Մհեր Խաչատրյանի ներկայացրած թվական պատկերը բավականաչափ մռայլ էր: Անցյալ մեկ տարվա հանցագործության կատարման դինամիկան, ըստ դատական խճանկարի, այսպիսին է՝ 5640 դատավճիռ, որից 1380-ը բռնությամբ կատարված հանցագործություններն են՝ սպանություն, ծանր մարմնական վնասվածք, իսկ 1345-ը՝ գույքային հանցագործություններ: Այսինքն ծանր հանցագործությունները կազմում են 50 տոկոս: «Այս թվերը մեզ հուշում են, որ խնդիրը պետական մակարդակով պետք է բարձրացվի», իր մտահոգությունը հայտնեց Մհեր Խաչատրյանը: Նրա կարծիքով, թվերն ավելի քան խոսուն են, եւ հանցագործությունների դինամիկան ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ստեղծել գիտահետազոտական լաբորատորիա, «որանից հետեւություններ պետք է անել»: Եթե քաղաքացիական գործերը բողոքարկելու առումով ծանրակշիռ խոչընդոտ կա՝ ֆինանսական սղությունը, ապա քրեական գործերը բողոքարկելու համար պետական տուրքի հարկադրանք չկա: Այս իմաստով քրեական եւ տնտեսական գործերով պալատի նախագահի հայտարարությունը՝ ուրեմն դատապարտվածների 92 տոկոսը գոհ է պատժից, եթե չի բողոքարկել, դարձյալ ճիշտ չէր: Պրն Խաչատրյանը նկատի չէր առել, որ բողոքը պատշաճանելու համար դատապարտյալը պետք է վճարի փաստաբանին, որը շատ ավելին է, քան պետտուրքը: Այնուամենայնիվ, 5640 դատավճռից բողոքարկվել է 334-ը, որից 16-ն է բեկանվել. Մհեր Խաչատրյանի ասելով, «օրենսդրության թերության պատճառով»: Միաժամանակ շեշտեց, որ կան դատավորներ, որոնց կայացրած դատավճիռը երբեւէ չի բողոքարկվել:

Դատական համակարգի միակ թերությունը համարվեց այն, որ հայցվոր ու պատասխանող կողմերը զրկված են վճռաբեկ դատարանին ուղղակի դիմելուց եւ մեխանիզմ իրականացնում են հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների միջոցով: Այս նորամուծությունը՝ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի ինստիտուտը, նրանք կայացած համարեցին, նշելով, որ քաղաքացիներն այսուհետ կախման մեջ չեն լինի միայն հանրաքվեության գլխավոր դատախազից ու նրա տեղակալներից: Նշվեց, որ վճռաբեկ դատարան բողոքարկման բերված 251 գործերի կեսը՝ 126-ը, պատկանում է հատուկ արտոնագիր ունեցող երեք փաստաբաններին: Վճռաբեկ դատարանի անդամները հուսով են, որ նշված փաստաբանների թիվը կրկնապատկվելու դեպքում քաղաքացիների ու փաստաբանների դժգոհությունները կիսով կդադարեն:

Քարգաղահական վարույթ՝ 4 դատավորների նկատմամբ

Պրն Դանիելյանը տեղեկացրեց, որ 99 թ. հունվարից լիարժեք գործել է դատարանների նախագահների խորհուրդը, որի ընդունած կազմակերպչական բնույթի որոշումները, նրա ասելով, շատ են օգնում, որպեսզի դատարանները կարողանան ճիշտ ընկալել ու կիրառել նոր օրենսդրությունը: Վճռաբեկ դատարանի նախագահը զգալի դեր վերագրեց ուսումնական խորհրդի կազմած դասընթացներին՝ տարին երկու անգամ հանրապետության 139 դատավորների համար գործնական դասընթացներ են կազմակերպել: Դատարանների թերացումներից մեկը համարեց ժամանակակից տեխնոլոգիաների բացակայությունը՝ դատական նիստերը մինչ օրս արձանագրվում են ձեռքով, էլեկտրոնային միջոցները շատ վատ են օգտագործվում, եղած հնարավորություններն էլ խորհուրդը դեռեւս չի կարողանում լրիվ օգտագործել եւ այլն: Դատարանների խորհրդի կողմից մշակվել է առաջին աստիճանի դատարանի գործավարության հրահանգ, նոր օրենսդրությունը մեկ տարի գործնականորեն կիրառելուց հետո պատրաստվում են օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկով ներկայանալ խորհրդարան:

Քանի որ դատական համակարգի թերացումների հիմնական բաժինը նրանք վերագրեցին օրենսդրության անկատարությանն ու բացթողումներին, «Ազգը» հարցումով փորձեց պարզել, թե քանի՞ դատավոր է պատժվել թերացումների համար եւ ինչպիսի՞ պատիժ է կիրառվել նրանց նկատմամբ: Պրն Դանիելյանը տեղեկացրեց, որ օրենքի խախտում թույլ տալու կապակցությամբ անցնող տարում արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ է հարուցվել 4 դատավորների նկատմամբ, եւ չորսն էլ եղել են քաղաքացիական գործերով: Հանրապետության արդարադատության խորհուրդը քննել է այդ դատավորների հարցը եւ մեկի նկատմամբ գտել, որ դատավարական խախտում թույլ չի տվել, վարույթը կարճվել է, երկրորդի դեպքում բավարարվել են քննարկումով, երրորդը ենթարկվել է դիտողության, չորրորդի հարցը չի քննարկվել, քանի որ նա տվյալ պահին հանրապետությունում չի եղել: Վճռաբեկ դատարանի նախագահի ասելով, դատավորներին «ձգելու» եւ արդարադատությունն իրականացնելու համար նրանց զգոն պահելու մյուս տարբերակը պատրաստված տեսությունների միջոցով մի դատավորի սխալը մյուսին ծանուցելն է:

Միշտ արդիական Վանո Սիրադեղյանը

Լրագրողների հետաքրքրության կենտրոնում, բնականաբար, այս օրերին քննարկվող Վանո Սիրադեղյանին կալանավորելու հարցն է, որի վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունն ասում է, որ դեռեւս չի որոշվել, թե ո՞վ պետք է դիմի Աժ՝ դատավո՞ր, թե՞ դատախազը: Այս հարցին Հենրիկ Դանիելյանը կտրուկ պատասխանեց. «Քանի դեռ չկա դատարանի դատավճիռ՝ մեղադրանքի տերը դատախազն է: Եթե մեղադրողը նա է՝ ինքն էլ թող լուծի խափանման միջոցի հարցը»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutsian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՆԹԱՑԻԿ

Վերակազմյալ կառավարություն. ուխտաունա՞կ, թե՞ պարապընթաց մարմին

Կառավարության կառուցվածքային բարեփոխումը, որի անհրաժեշտության մասին խոսում էր դեռեւս Վազգեն Սարգսյանը, իրողություն դարձավ: Բայց սա եղերահիշատակ վարչապետի ծրագրա՞ծ բարեփոխումն է, թե՞ ոչ դժվար է ասել: Արտաքուստ այդպես է, քանզի նկատելիորեն «բեռնաթափվել» է կառավարման ծանրաշարժ ապարատը: Վերամիավորումների հաշվին կրճատվել է 7 նախարարություն: Բայց արդյո՞ք դրանից այն ավելի ճկուն, դյուրաշարժ ու արդյունավետ կդառնա: Այս հարցին միայն ժամանակը կպատասխանի: Անկասկած է, սակայն, որ սկզբնական փուլում, մինչեւ նորանշանակ նախարարները գործին ծանոթանան, իսկ «հնաբնակները» խորամուխ լինեն իրենց ոլորտներին արհեստականորեն միացված նոր ճյուղերի մեջ, կառավարությունը կբարունակի տեղապտույտ տալ: Դեռ լավ է, եթե այդ անխուսափելի պարապ ընթացքը աղագայի թափ հավաքելու նպատակին ծառայի: Ամենագլխավորը դա է, եւ ահա այդ առթիվ առաջանում են լուրջ մտահոգություններ:

1. Կառավարությանը «լարվածության մեջ» պահելու երկու հիմնական «լծակ» կա՝ հանրապետության նախագահը եւ խորհրդարանական ընդդիմությունը: Առաջինը սահմանադրական լիազորություն ունի կառավարությանը պաշտոնանկ անելու, երկրորդը իր ճնշադասությամբ՝ նրա գործունեությունը խթանելու: Ներկա պահին, սակայն, երկուսն էլ իր հավանական են դարձել: Հոկտեմբերի 27-ից հետո երկրում ընթացող քաղաքական գործընթացների բերումով նախագահը, մեղմ ասած, «ինքնամեկուսացել» է: Իսկ ահա այժմյան վերակազմավորումներից առաջ վարչապետ Արամ Սարգսյանի եւ խորհրդարանական կուսակցությունների «գրկախառնությունը», եւ ԱԺ փոխրամասնությանը «մեծահոգաբար» նախարարական աթոռներ գիջելը շատ հավանական են դարձնում այդ փոխրամասնության «պապանձվելը» ստացած «նվերը» կորցնելու վախից: Չէ՞ որ նույն վարչապետը, առանց ԱԺ մեծամասնության աջակցությունը կորցնելու մտահոգության (որը նա ուներ մինչ այդ էլ) ցանկացած պահի կարող է ետ վերցնել իր «շնորհը»: Այլ խոսքով, ԱԺ ներկայիս ընդդիմությունը, այդ թվում առավել «արմատական» կոչվելու հավակնություններով մինչ այս իրար հետ մրցող ՀԿԿ-ն եւ ԱԺՄ-ն, ի դեմս իրենց վառ արտահայտված ընդդիմադիր պատգամավորներ Լեոնիդ Հակոբյանի ու Դավիթ Վարդանյանի, այլեւս մաս են կազմում կառավարությանը:

2. Ցանկացած կառավարության հաջողության գրավականը մեկ միասնական նպատակի շուրջ համախմբվելու կարողությունն ու ձգտումն է: Այդպիսի նպատակն առկա է երկիրը հարկ է հանել կաթվածից: Բայց ինչպե՞ս: Դժվարանում եմ հավատալ, թե կառավարությունը ընդունակ պիտի գտնվի միասնական ծրագիր մշակել հենց թեկուզ տնտեսությունն աշխուժացնելու համար: Ծայրահեղ աջ լիբերալ ֆինանսներ եւ էկոնոմիկայի նախարար Լեւոն Բարխուդարյանի հետ ինչպե՞ս պիտի համաձայնի ծայրահեղ ձախ կոմունիստ Լեոնիդ Հակոբյանը: Վերջինիս վերապահված է համակարգելու տարածային կառավարումը եւ քաղաքաշինության հարցերը: Տարածային կառավարման կոմունիստների հայեցակարգը վաղուց հայտնի է նրանց իդեալը մնում է երբեմնի գյուղական ու քաղաքային խորհուրդների վերականգնումը: Լեոնիդ Հակոբյանը, իբրեւ կոմունիստ, փորձելո՞ւ է իրականացնել այդ իդեալը: Եթե այո, ապա անխուսափելիորեն բախվելու է կառավարության իր նոր գործընկերների մեծամասնության հակազդեցությանը, եթե ոչ էլ ի՞նչ կոմունիստ նրանից: ԱԺՄ-ական Դավիթ Վարդանյանը, որ ավելի վաղ զբաղեցնում էր նախագահի վերահսկողական ծառայության պետի պաշտոնը, իր աղմուկ չի բարձրացրել նախորդ տարիներին իրականացված սեփականաշնորհման ժամանակ թույլ տրված աղտոտումների մասին: Հիմա, դառնալով պետական գույքի կառավարման նախարար, որի իրավասությանն է հանձնվել նաեւ նախկին սեփականաշնորհման նախարությունը, պիտի շարունակի՞ նախկին չարաշահումների համար մեղավորներին ջրի երես հանելու եւ պատժելու իր գիծը, թե՞ պիտի ընկրկի՞ կառավարության ներկայիս կազմի իր գործընկերներից ոչ էլերի հնարավոր հակազդեցությանը բախվելով: Միամիտ պիտի լինել՝ այդպիսի հակազդեցությունը բացառելու համար:

3. Խորհրդարանական ընդդիմության «չեզոքացումը» էլ ավելի չի՞ խորացնելու մեր պետական-հասարակական կյանքի ճահճացումը, էլ ավելի անվերահսկելի չի՞ դարձնելու կառավարության վարչապետին սպասող մի քանի առավել ազդեցիկ նախարարների գործունեությունը: Ո՞րն է երաշխիքը, որ նրանք, այս կերպ, փաստորեն սանձալով գործելու անսահմանափակ ազատություն, միտք կկարողանան բավականաչափ զգուշավոր լինել ներքին ու արտաքին ճակատագրական նշանակության խնդիրներ լուծելիս, իմաստնություն կունենան չհոփանալու եւ չվերասերվելու, հետաքրքրելու ոչ թե անձնական-կորպորատիվ, այլ ազգային-պետական շահեր: Այլ խոսքով, հաջողվելո՞ւ է հնարավոր պառակտումները էլ ավելի չե՞նք զգելու կուսակցությունների առանց այն էլ ոչ բարձր քաղաքական վարկը ժողովրդի աչքում, զանգվածներին հավելյալ կերպով վանելով նրանցից: Իսկ քաղաքական կուսակցությունների այդպիսի հեղինակազրկումը, վերջ ի վերջո, ծանրագույն հարված է Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման առանց այն էլ դժվար ընթացքին:

Միով բանիվ, դժվար է ասել՝ կառավարության կառուցվածքի ու կազմի հերթական վերածեւումի օգո՞ւտն է շատ լինելու, թե՞ վնասը: Առայժմ ակնհայտ է միայն, որ մինչեւ այժմ եղած այդ կարգի բոլոր վերածեւումները արվել են պահի թելադրանքով, կամ նախագահի, կամ վարչապետի քմահաճույքով: Վախենամ, թե այս վերջինն էլ ձեռնարկվել է կառավարման համակարգը վարչապետ Արամ Սարգսյանին «հարմարեցնելու» մղումով: Մինչդեռ որքա՞ն լավ կլիներ, եթե մենք, վերջապես, ունենայինք կառավարության առավել օրինական կառուցվածք, որը ոչ թե ինքը «հարմարվեր» վարչապետին, այլ վարչապետն իրեն: Քանզի չի կարող «կայանալ» մի պետություն, որի պետական կառավարման ինստիտուտները այդպես անվերջ եւ այդքան հաճախ «վերածեւվում» են այս կամ այն պաշտոնյայի «հագով»:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Կառավարության փոփոխություններ առաջարկելը ես չեմ համարել դիրքային պայքար»

Սկիզբը էջ 1

– Ուժային նախարարությունների ղեկավարների փոփոխություն եւ կառուցվածքի վերանայում նախատեսվա՞ծ էր, թե՞ ոչ: Խոսվում էր ազգային անվտանգությունը վարչություն դարձնելու, ՆԳ նախարարի փոփոխության վերաբերյալ, հանրապետության նախագահի հետ փոխզիջումն այս կառույցները չփոփոխե՞լն էր:

– Ճիշտն ասած, բոլոր ժամանակներում, անկախ նրանից՝ կառավարության կազմում փոփոխություն լինելու է, թե ոչ, շրջանառության մեջ միշտ գոյություն ունեն տարբերակներ, որոնց հղկումով էլ որոշակի առումով առաջանում են նոր գաղափարներ: Ուժային նախարարությունների վերածեւում եւ նրանց փոփոխություն, որպես այդպիսին, ես նկատի չեմ ունեցել այս անգամ: Հանդիպումների առաջին օրվանից, երբ Սարդարապատում ճնշակվում էր կառավարության կառուցվածքը եւ միահամուռ հաստատվեց կառույցը, չկար որեւէ կուսակցություն, որը դեմ էր տվյալ սկզբունքներին եւ չի եղել որեւէ առաջարկություն, որը հաշվի չի առնվել:

– Ճի՞շտ են արդյոք այն լուրերը, ըստ որի՝ Դուք կուսակցություններին առաջարկել եք կամ գալ իշխանական դաշտ եւ վերցնել իշխանության լծակները, կամ այլեւս չքողոքել, որ գեներալ Մանվելն ու «երկրապահն» են տնօրինում իշխանությունը:

– Անհեթեթ է, նման բան ես ասողը չեմ, եւ նման բան իմ պարագայում չի կարող լինել: Գեներալ Մանվելը, գնդապետ Սեյրան Սարոյանը եւ բանակի մյուս երկրապահական թեւի դեմքերն իմ ընկերներն են, եւ ես որեւէ վերք իրենցից չէ, որ պիտի պաշտպանվեմ: Ես պիտի պաշտպանեմ իրենց:

– Այսօր Դուք կոչ արեցիք իշխանությանը եւ քաղաքական ուժերին համախմբվել ազգային գաղափարախոսության շուրջ, ի՞նչ նկատի ունեիք:

– Ես այն կարծիքին եմ, որ յուրաքանչյուր ազգ ունի ազգային գաղափարախոսություն՝ իր ազգի բարգավաճումը, դա կեղծ կատեգորիա չէ: Մեր ազգը, բացի բարգավաճող ազգի գաղափարից, նաեւ պահանջատեր ազգ է, իր անցյալը չի մոռանում, եւ դա շատ լավ է: Մեր ազգը իր երազներում միշտ ունի ծովից ծով Հայաստանի գաղափարը՝ մինչեւ Կիլիկիա: Գաղափարը գաղափար, սակայն ներկա իրավիճակում ազգային գաղափարախոսությունը հեղեղվել է, դրա վառ օրինակն արտագաղթն է: Արտագաղթի պատճառներից մեկն էլ ես համարում եմ ազգային գաղափարախոսության թույլ լինելը: Ազգային գաղափարախոսությունը, սակայն, պետք է տարածվի ոչ թե մեծամասնության, կառավարության կամ նախագահի, մեծամասնությանը հարող մամուլի կողմից, այլ նրանց բոլորի, ովքեր ապրում են այս երկրում՝ լինեն ընդդիմադիր, կուսակցական ուժեր, թե ազգային փոքրամասնություններ: Սա է հիմնական նպատակը՝ միասնաբար ի մի գալով ստեղծել մի գաղափարախոսություն, որը կարող է առաջնորդել դեպի բարգավաճող ապագա:

– Այսօր ճնշակվում է 2000 թ. պետբյուջեի նախագիծը, եւ կենսրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանն առաջարկեց ի վերջո ընտրել 5–6 ձեռնարկություն եւ բոլոր ուժերը ներդնել դրանց առաջնահերթ զարգացման համար: Կառավարությունը եւ Դուք կողմնորոշվե՞լ եք արտադրական առաջնահերթությունների առումով:

– Իմ վարչապետ եղած օրվանից այդ գաղափարը ճնշակվում է, այն կոչվում է եռացող կաթսայի գաղափար, որի իրագործման տարբեր մոդելներ կան, կարելի էր ասել շոգեքարշի գաղափար, բայց քանի որ մեզ մոտ երբ գնացքի անուն են տալիս, ասում են՝ թռչելու ժամանակն է, արդեն ավելի հարմար է եփվող կաթսա ձեւակերպումը: Ցավալին այն է, որ Հայաստանում նման հինգ ձեռնարկություն ընտրելը բավական բարդ գործ է, ճիշտ ընտրության կարիք կա, որից հետո այդ ձեռնարկությունները կդնեմ ազատական, ճիշտ օրենսդրական դաշտում եւ կապացուցեմ մնացած տնտեսվարող սուբյեկտներին, որ ճիշտ աշխատելու դեպքում կունենաք շահույթներ եւ կբարգավաճեք, առողջ մթնոլորտը կտարածվի եւ կներգրավի բոլոր ձեռնարկություններին:

– Դուք Ձեզ համար անձամբ ճշտե՞լ եք այն ոլորտները, որոնք հեռանկարային են՝ շինինդուստրիա, թեթեւ արդյունաբերություն...

– Շինինդուստրիայի առումով թերեւս, իսկ թեթեւ արդյունաբերության պարագայում, կարծում եմ, պետք է գնալ հարկային դաշտի թուլացման ճանապարհով: Մեր թեթեւ արդյունաբերությունը գնացել է մահվան ճանապարհով, բայց ունի մեծ ներուժ, ոչ թե տեխնիկական բազայի, այլ մասնագետների: Հարկային քաղաքականության մեղմացմամբ կհասնենք որոշակի առաջընթացի, իմ համոզմամբ՝ հեռանկարային է քիմիան, մետալուրգիան, ռադիոէլեկտրոնիկան: Ձեռնարկությունների անունները ճշված են, մեկ ամսից հայտնի կդառնան, ես ուզում էի կամենա հենց այսօր ասել ընտրված ութ ձեռնարկությունների անունները: Անհրաժեշտ է տվյալ ձեռնարկությունների համաձայնությունը դաշտ մտնելու եւ խաղի կանոններն ընդունելու: Ընտրված են թ՛ւ պետական թ՛ւ մասնավոր ձեռնարկություններ՝ անկախ սեփականության ձեւից: Շեշտեմ, որ պետական ձեռնարկությունների ընտրության պարագայում առաջանում է նաեւ բարձրորակ ղեկավարի խնդիրը, ցավոք, Հայաստանում չկա տնօրենների լիցենզավորող պետական ինստիտուտ:

– Քարեփոխված այս կառավարությունը Դուք համարո՞ւմ եք ժամանակավոր, ինչպես գուշում են շատերը:

– Իհարկե ոչ, ցավոք, մեր երկրում ամեն լավ բանի մեջ տեսնում են ինչ-որ վատը, կատարված այս քայլերն ունեն մի նպատակ՝ մեկ անգամ եւմ ամրապնդել այն գաղափարը, որ կյանքը շարունակվող է, պետք չէ հույսը կորցնել, պետք է հավատալ: Դրա համար ստեղծվեց կուսակցական խորհուրդը: Ցավոք, դա սկսեցին ճնշադատել, բայց ամեն ինչ կազմակերպված է եղել շատ անկեղծ եւ չեմ՝ կարծում, որ իմ անկեղծությունը ոչ սանդարտ է: Ես գտնում եմ, որ ներկա իրավիճակում այս ընթացքի համար միակ ելքը միասնականությունն է:

– Հույսը չկորցնելու եւ հավատի մասին շեշտեցիք՝ հոկտեմբերի 27-ի դեպքերի նախաքննության ընթացքը Ձեզ բավարարո՞ւմ է, չե՞ք կարծում, որ ծգձգում, դանդաղում կա:

– Այո՛, բավարարում է, իհարկե, ես կուզենայի որքան հնարավոր է շուտ իմանալ՝ ո՞վ է իմ թշնամին, բայց ճիշտ խոսք կա՝ համբերությունը կյանք է, սխալվել չի կարելի:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հայաստանի էներգետիկ ...

Սկիզբը էջ 1

«Շատ ավելի հիշ» հանոզված է «Հայռուսգազարդի» նախագահը: Ըստ նրա ռուսական կողմը այն ժամանակ պարզապես «աչքերը փակել է այդ եւ շատ հարցերի առաջ»: Իսկ որպես մասնագետ, պրն Ադոնցի կարծիքով, չկար եւ հիմա էլ չկա այլընտրանք (եթե հաշվի չառնենք Իրան-Հայաստան գազմուղի շուրջ սկսված բանակցությունները), եւ կատարված քայլը ամենահրատեսականն է: ՀՀ կանոնադիր կապիտալի դիմաց ներկրվող ռուսական գազը պարզապես փրկություն էր այն տարիներին եւ նաեւ հիմա, քանի որ ոչ-ոք չէր կարող հանձն առնել գազ ներկրել: Այն, ինչ արել է «Հայռուսգազարդը», մասնագետների գնահատմամբ շատ ավելին է, քան մի որեւէ առաջատար բանկի կողմից արդյունաբերության վարկավորումը: Ավելին, այս դեպքում «վարկատուի» դերում հայտնված ՀՀ-ն ոչ միայն տոկոսները, այլեւ իր տրամադրած «վարկը» ետ չի ստանում: Ռուսական գազի դիմաց ծառայությունների ու բնակչության կողմից պարտքերի չափը հասել է աստղաբաշխական ու անհանգստացնող չափերի. առաջին դեպքում, առ 1-ը փետրվարի՝ 8 մլրդ 580 մլն դրամ, երկրորդ դեպքում 1 մլրդ 300 մլն, եթե դրան ավելացնենք նաեւ ջեռուցման տնտեսությունների մոտ 2 մլրդը, ապա խոսքերն ավելորդ են «Այսպես չի կարող շարունակվել», ասաց պրն Ադոնցը՝ բազմիցս ասվածը: Ռուսական մասակարարը (հիմա՝ «Իտեռան») շատ է գնացել զիջումների ու միայն վերջին բանակցությունների արդյունքում հնարավոր է եղել համոզել, որ պարտքերի պատճառով գազի մատակարարումը չդադարեցվի, այլ նվազեցվի 30 տոկոսով: Դրա արդյունքում որոշվել է մարտի մեկից դադարեցնել ջեռուցման կայաններին գազի մատակարարումը, եւ ջեռուցումը մինչեւ մարտի 15-ը երկարացնել միայն Գյումրիում: ՀՀ-ում չվճարումների պատճառով գազի չնչին քանակությամբ սպառումը (որը կազմում է 80-ականների 20 տոկոսը միայն) թույլ չի տալիս համակարգին եթե ոչ շահույթով, գոնե նորմալ աշխատելու: Այսօրվա դրությամբ Հայաստան ներկրվող տարեկան մոտ 1 մլրդ 200 խմ (կեսը գնվում է «Իտեռայից» կոմերցիոն պայմաններով, 1000 խմ-ն՝ 53 դոլարով) գազի պայմաններում հնարավոր չէ շահույթով աշխատել, նվազագույն չափը պետք է լինի 1 մլրդ 600 հազար: ՀՀ կանոնադրական կապիտալի դիմաց գազի մատակարարման վերջին ժամկետը 2001 թիվն է, որից հետո «Իտեռան» դարձյալ կմնա Հայաստանի միակ կոմերցիոն մատակարարը, եթե չգտնվեն այլընտրանքային ճանապարհներ:

Պրն Ադոնցի խոսքը զերծ չէր նաեւ ինքնադատությունից. նա մասնավորապես համաձայն է այն կարծիքին, որ «Հայռուսգազարդի» ստեղծումը պետք է անպայմանորեն վավերացվեր խորհրդարանի կողմից: Այդ դեպքում բերեւս կառաջադրվեին նաեւ ներդրումային պայմաններ: Ձեռնարկության հավակնություններ ՀՀ գազի քայքայված համակարգը 5 տարում վերականգնելու համար կպահանջվի նվազագույնը 42 մլն դոլար (միայն 20 մլն-ը՝ ստորգետնյա պահեստարանի վերակառուցման համար): Այդ գումարները կլինեն միայն այն դեպքում, երբ գազի դիմաց վճարումները հասնեն 90 տոկոսի, եւ քանի որ այսօրվա վիճակը (այսօր վճարումները կազմում են ընդամենը 15 տոկոս) թույլ է տալիս ենթադրելու, որ մոտ ապագայում նման գումարների հույսեր չկան, մնում է միայն հույսը դնել ռուսական ներդրումների վրա, ինչը, սակայն, Ռ. Ադոնցի գնահատմամբ, կնշանակի ռուսական բաժնեմասի մեծացում հայկական կողմի հաշվին: Մի խոսքով, ստեղծվել է որոշակի փակուղային իրավիճակ, որի համար ելքեր պետք գտնել: **«Ազգի»** այն հարցին, թե էլեկտրիկ ցանցերը «Իտեռային» վաճառելով չի՞ կարելի ենթադրել արդյոք, որ միաժամանակ լուծվում է երկու խնդիր՝ էլցանցերի սեփականաշնորհման ու պարտքերի (այսօրվա դրությամբ գազի դիմաց ամենամեծ պարտաքերը էներգետիկ համակարգն է՝ մոտ 60 տոկոս), պրն Ադոնցը դիվանագիտորեն պատասխանեց, որ դեռ պետք է մտածել: Որպես մասնագետի, նա կարծում է, որ բոլոր հարցերը կարող է լուծել պետությունը՝ սեփականաշնորհը առջեւ դրվող պայմանների սահմանումով. այդ առումով շատ կարեւոր է էլցանցերի վաճառքը, որի պայմաններում կա մի կետ, ըստ որի անկախ նրանից սպառողները կվճարե՞ն, թե՞ ոչ, սեփականատերը պարտավոր է սպառված էներգիայի դիմաց վճարել: Մի խոսքով՝ ամեն տեղ պետք է գործի օրենքի մեխանիզմը, պետք է հստակեցվեն մրցույթի մասնակիցների առջեւ դրվող պայմանները:

Լրագրություն

Երբ հորրորդ իշխանությունը սերտաճում է մյուս իշխանությունների հետ...

Պատվերով լրագրության «ոսկե կանոնների» եւ ծախու լրագրողների մասին

Կարիք չկա երկար-բարակ բացատրելու, թե ի՞նչ է հորրորդ իշխանությունը եւ ո՞րն է նրա դերը հասարակության մեջ: Նաեւ հիշեցնելու կարիք չկա, թե հորրորդ իշխանությունը իշխանական կառույցի սյուներից մեկն է, որ առանց նրա այդ կառույցը խախուտ է: Հայաստանի այսօրվա իրավիճակը ցույց է տալիս, որ մամուլը ոչ թե մի առանձին իշխանություն է, այլ հաճախ մյուս իշխանական թեւերի սոսկ կցորդը: Լրատվամիջոցները, փոխանակ աղահովելու հասարակության իրազեկությունը, դարձել են հասարակության վրա գաղափարապես ազդելու տարբեր իշխանական թեւերի ու շրջանակների հլու կամակատարներ, եւ ազատ ու անկախ մամուլի մասին խոսակցությունները դառնում են ծիծաղելի: Մամուլն ազատ է միգուցե ընտրված ծեւերի, միջոցների ու արտահայտությունների մեջ, բայց ոչ հասարակական կարծիքի ձեւավորման: Վերջերս, մի խոսակցության ժամանակ, ԱՄՆ-ից ժամանած մի լրագրող Ջանին Ֆրենը, որը որպես ազատ լրագրող մի քանի տասնյակ տարի թղթակցել է ամերիկյան հայտնի թերթերին, այն հարցին, թե ի՞նչն է աչքի զարնում հայկական մամուլում, զարմացած արտաբերեց «ծայրահեղ սուբյեկտիվությունը»: Ըստ նրա, հայկական թերթերից գրեթե ոչ մեկում չկա անկողմնակալ լրատվություն, թերթերը ողողված են հեղինակների սուբյեկտիվ կարծիքներով, որոնք փաթաթվում են ընթերցողի վզին: Դա ցավալի իրողություն է: Ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, թե ինչ են խոսում «լրագրողական շրջանակներում», ո՞ր հեռուստատեսությունն է նախագահինը, վարչապետինն ու ԱԺ-ինը, իսկ թերթերի դեմքում նշվում են կոնկրետ անուններ՝ Մեծ Սարգսյանինը, Վահան Շիրխանյանինը, Վանոյինը, Լեւոնինը եւ այլն: Ամեն օր տեղի են ունենում մի քանի ասուլիս ու դասավարություն, առանց թերթելու թերթերն ու հեռուստաալիքներին, կարելի է արդեն պատկերացնել, թե որ լրատվամիջոցը ինչպես է մեկնաբանելու դրանք, եւ այդ բազմազանության մեջ հնարավոր չէ գլուխ հանել, թե ի՞նչ է իսկապես տեղի ունեցել: Սա լրատվամիջոցների մասին ընդհանրապես: վիճակն ավելի բարդ է մասնավոր դեպքերում, երբ խոսքը արդեն առանձին լրագրողների մասին է: Այսօր լրագրողների մի մեծ բանակ մի կողմ թողնելով ստեղծագործական անկախությունը, սերտաճել է իշխանությունների այս կամ այն թեւի ու շրջանակի մեջ, դարձել նրանց անբաժան մասնիկն ու լրագրողից կարծես վերածվել քաղաքական գործչի, դարձել քաղաքական-տնտեսական էլիտայի մի մասիկը:

«Ես ծախու չեմ, բայց ծախվում եմ»

Լրագրողի աշխատանքի ամենակարեւոր պայմաններից մեկը հավատի ու մշտական լրատվական աղբյուր ունենալն է: Մեր այսօրվա իրականության մեջ այդպիսի աղբյուրներից օգտվելու ու դրանց հետ մշտապես աշխատելու համար լրագրողները հաճախ ստիպված են դառնալ դրանց խոսափողները՝ հասարակությանը հրամցնելով ինֆորմացիան ոչ այնպիսին, ինչպիսին կա կամ, գոնե, «կիսաֆաբրիկաս»: Առավել «ոչ պրոֆեսիոնալներին» անհասանելի է այդ ինֆորմացիան, իսկ «պրոֆեսիոնալներն» էլ դրանք ստանում ու հրամցնում են արդեն «աղը ցանած» ու «ծամած» վիճակում: Մնում է միայն մարսել: Ինֆորմացիոն աղբյուրները անհասանելի են այն լրագրողների համար, որոնք չգիտեն պաշտոնական, պաշտոնամերձ ու ոչ պաշտոնական շրջանակների հետ աշխատելու «ոսկե կանոնները»: Ճիշտ է, դրանց հետեւելու համար լրագրողից պահանջվում է ոտնահարել մի քանի բարոյահոգեբանական պատնեշներ, սակայն, ինչպես ասում են, դժվարն առաջին քայլն է: Առաջնորդվելով «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքով, հայաստանյան շատ ու շատ լրագրողներ կարողացել են հաղթահարել դրանք եւ դարձել են տպագիր ու նաեւ ոչ տպագիր մամուլի «աստղեր»:



Վերջերս մի նախարար, դժգոհելով գրածս հոդվածից, որը չէր արտահայտել կառավարության կարծիքը, կեսկատակ առաջարկեց՝ «հիմա ի՞նչ, մի հատ դուխի էլ մե՞նք տանք, որ հակառակը գրեմ»: Ակնարկը թափանցիկ էր եւ խոցելի: Այսօր արդեն հրապարակավ ստիպված ենք այդ նախարարին եւ նաեւ այն պաշտոնյաներին ու քաղաքական գործիչներին, որոնք ունեն լրագրողների հետ աշխատելու նման փորձ, խորհուրդ տալ, երբեմն թաքն ու չորը տարբերել միմյանցից եւ հայտարարել, որ, ի նպատակակետն ու գովազդը տողատակերում թաքցնելու կարողությունն է, ինչին, խոստովանենք, կատարելապես տիրապետում են մեր մի շարք «պրոֆեսիոնալ շորթողները»: Նման լրագրողների «պրոֆեսիոնալիզմն» ու ճկունությունը երբեմն հասնում են այն աստիճանի, որ միաժամանակ կարող են «սնվել» մի քանի տարբեր, երբեմն հակադիր աղբյուրներից: Աբսուրդը հասել է նրան, որ նույնիսկ նույն թերթում կարող են հայտնվել լրագրողներ՝ տարբեր տեղերի ծառայող: Իհարկե, խորհրդ սրտի, լրագրողական աշխարհը դեռ մինչեւ վերջ չի կեղտոտվել, կան մարդիկ, ովքեր իրենց բարոյական կերպարը գերադասում են սարքովի «պրոֆեսիոնալիզմից»: Ինչպես շոու բիզնեսում կարելի է հիշել թե շատ ձայն ունեցող երգչին, մեծ ներդրումների գնով, դարձնել աստղ, այնպես էլ հիշել թե շատ գրելու ձիրք ունեցող լրագրողին՝ «լրագրության աս»: Ի դեմ, պատվերով նյութերի մյուս ոսկե կանոններից մեկը նաեւ խմբագիրներին, ստիպված ենք փաստել, վերջին շրջանում շատ հաճախ «գործարքները» կատարվում են ոչ թե առանձին լրագրողների, այլ ավելի բարձր մակարդակներով, խմբագիրների միջոցով, որոնք հետեւողականորեն իրենց վրա են վերցնում պատվերի կատարման «սուրբ» գործը: Իհարկե, շատ կարեւոր դեր են խաղում նաեւ խմբագրի անձնական կապերը, շրջապատը, նրա կաշառունակության աստիճանը եւ այլն: Կարծում եմ ավելի մանրացնելու հարկ չկա, ինչպես նաեւ հարկ չկա անուններ տալու: Այդ անունները մենք կարդում ենք թերթերում, տեսնում հեռուստակրաններին, ռադիոերթերում: Պարզապես ընթերցողներին, հեռուստադիտողներին ու ռադիոլսողներին խորհուրդ կտայինք լինել ավելի ուշադիր ու հետեւողական, այդ դեպքում հնարավոր կլինի թաքը չորից հեշտությամբ տարբերել:

Մի առիթով՝ հայաստանյան ոչ անհայտ լրագրող ասել է՝ «Ես ծախու չեմ, բայց ծախվում եմ»: Խոսքեր, որոնք ամբողջովին բնութագրում են պատվերով լրագրության «ոսկե կանոններին» հետեւողներին ու ցավոք, նրանց նմանվել ցանկացողներին: Մեզ մնում է արձանագրել, նման գործելաոճը մեր լրագրության մեջ կարծես դառնում է ավանդույթ, եւ պետք է ինչ-որ կերպ դա կասեցնել:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

«Մելի փոխարեն սելվորն է ճռռում», կամ թե ինչպես են քաղաքի այրերը եւ լրատվական միջոցները հովանավորում օրինազանցներին

1958 թ. մեր մոր մահից հետո մեր անվամբ, որպես ժառանգություն ձեւակերպեցինք Պուլկինի նրբանցքի թիվ 14 տունը, սանալով համապատասխան փաստաթղթեր սեփականության իրավունքով: 1969 թ. օգտվելով մեր ժամանակավոր բացակայությունից, կից թիվ 15 տան սեփականատեր Ա. Քարիմյանն ընդհանուր պատից նոր մուտք է բացում դեպի մեր տուն եւ ամօրինի տիրանում մեր սեփականությանը: Այդ օրվանից մենք երկու տասնամյակ անհավասար պայքար մղեցինք մեր տունն ազատելու համար, բայց ապարդյուն: Պատասխանողի հայրը հայտնի փաստաբան էր, որի սուրն աջ ու ձախ կտրում էր, ուստի եւ այդպես էլ մենք չկարողացանք այդ զոհաբերին վտարել մեր տնից:

Համածայն դատարանի որոշման, առանց մեր համաձայնության տունը մնաց Ա. Քարիմյանի տնօրինության տակ՝ վարձակալական հիմունքներով: Այսպես անցան տարիներ:

Պատասխանող Ս. Քարիմյանը տեսնելով, որ «իրենց դեմ այլեւս խաղ չկա», 1991 թ. ինչպես իր, այնպես էլ մեր տունը փակելով, չվում է արտասահման եւ մշտական բնակություն հաստատում այնտեղ:

Նոր կարգեր հաստատվելուց հետո, բնականաբար, մենք նորից դիմեցինք իրավական օրգաններին մեր տունն ազատելու պահանջով: Եվ փառք Աստծո, 1997 թ. հոկտեմբերի 2-ին Սպանդարյան շրջանի ժողովարանը վճիռ կայացրեց մեր տունն ազատելու եւ մեզ հանձնելու մասին: Սակայն դա դեռ արդարության հաղթանակը չէր: Ա. Քարիմյանի հեռանալուց հետո պայքարի մեջ էին մտնելու նրա եղբայրը եւ եղբոր կինը, որոնք էլ հենց բողոք ներկայացրին ժողովարանի վճռի դեմ:

Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները ժողովարանի վճիռը թողեցին անփոփոխ, որը ստացավ օրինական ուժ: Սակայն այստեղ առաջ է գալիս տրամաբանական հարցը, թե պատասխանողի բարեկամներն ինչու են բողոքում, չէ՞ որ բոլոր փաստաթղթերով տունը մերն է, եւ Քարիմյանն ընդամենը մեր տան վարձակալն է, ուրեմն ի՞նչն է բողոքի հիմքը:

Տարիներ շարունակ, առանց վարձ վճարելու, Քարիմյանները շահագործել են մեր տունը, իսկ հիմա, իհարկե, շատ ցավալի է նրանից զրկվել եւ հանձնել օրինական տերերին: Ուստի եւ նրանք օրինական ճանապարհով չհասնելով արդյունքի, դիմում են նոր միջոցների՝ մեր տունը ձեռից բաց չթողնելու համար:

Առաջին միջոցն այն է, որ «խաղի» մեջ մտցրին թաղամասի Արարատ Զուրաբյանին:

Այս թաղամասն իր թաղամասարանի անունից մի հայցադիմում է ներկայացնում Կենտրոն համայնքի առաջին ատյանի դատարան եւ պահանջում, որ մեր ժառանգության վկայականը չեղյալ համարեն: Թադամաս մարդ է, այդքա՞ն էլ չանի իր բարեկամի համար: Սակայն այդ ամոթալի եւ անհեթեթ հայցը մերժվում է եւ առաջին ատյանի, եւ վճռաբեկ դատարանների կողմից: Դրանից հետո պատասխանողը մտակում է կատարումը կասեցնելու նոր միջոց. շանտաժի եւ դեմագոգիայի կիրառում: Երբ հարկադիր կատարման ծառայության աշխատողները գալիս են վճիռը կատարելու, պատասխանողի եղբոր կինը՝ Ասյա Կոսյանը, արդեն հավաքած է լինում մարտականորեն տրամադրված յուրայիններին եւ ելույթ է ունենում, որ ահա կատարման ծառայության «բռնակալները» եկել են թալանելու իրենց խեղճ եւ անպաշտպան մարդկանց: Այստեղ էին հավաքված լրագրողներ ու հեռուստատեսության աշխատողներ եւ «Կանայք հայոց աշխարհի» կոմիտեի նախագահ՝ Ժաննա անունով մեկը, որը կոկորդ պատռելով բղավում էր, որ ինքն այս հարցն այդպես չի թողնի, ճնշության կառնի եւ կբեկանի վճիռը:

Այստեղ էր նաեւ «Հայոց աշխարհ» թերթի լրագրող Արմեն Հակոբյանը, որը հենց հաջորդ օրը մի հոդված տպեց իր թերթում «Չդիմացավ առերեսմանը» վերնագրով: Բերեմ մի հաղվածք այդ զավեշտալի հոդվածից. «...պատասխանողը չկար, նա արդեն 6-7 տարի Ամերիկայում է: Փոխարենը նրա հարեւանները հավաքվեցին եւ սկսեցին պարզել, թե ով ով է: Քանի որ դատարանը զլացել էր այդ մարդկանց վկա կանչել, ծարահայալ մենք սկսեցինք դատավարություն անել»...

Մեկը հարցնող լինի, թե այ լրագրող, ֆեզ ո՞վ է իրավունք տվել օրինական ուժ ստացած դատական ակտը ճնշության առարկա դարձնել փողոցում, այն էլ ամբոխի մեջ եւ ստիպել, որ հարկադիր կատարման պաշտոնյաներն առանց իրենց պարտականությունները կատարելու հեռանան:

Հաջորդը հեռուստատեսության «Ար» ծրագիրն էր, որն ամբողջ երկրով մեկ ցուցադրեց, թե ինչպես մենք հարկադիր կատարման ծառայության աշխատողների հետ փորձում էինք տիրանալ ուրիշի սեփականությանը:

Եվ վերջապես. «Հայկական ժամանակ» թերթում Նիկոլ Փաշինյանի ստորագրությամբ տպված հոդվածի մասին: Այն ընդհանուր առմամբ ավելի շատ նման էր պառավական բամբասանքների, քան գլխավոր խմբագրի ճնշաղատական հոդվածի: Բերեմ մեր գործին վերաբերող փոքր մեջբերում. «Տկն Ասյան փաստաթղթեր է ցույց տալիս, դիմումներ, վկայագրեր: Կարճ ասածն ունի բոլոր այն փաստաթղթերը, որ թվում է պետք է երաշխավորեն նրա սեփականությունը: Լավ, ոնց է պատահել, որ այսքանից հետո դատարանը նման վճիռ է կայացրել, զարմանում եմ ես»: Մի զարմացեք, Նիկոլ Փաշինյան, եթե դուք փորձեիք գոնե մեկ անգամ նայել այդ փաստաթղթերը, կարդայիք դատական վճիռը, կհամոզվեիք, որ ձեզ այլ բան ասում եւ այլ բան են ցույց տալիս, կհամոզվեիք, որ այդ փաստաթղթերը վերաբերում են իրենց՝ թիվ 15 տանը, որը ոչ մի կապ չունի մեր թիվ 14 տան հետ: Այնժամ, թերեւս, ձեզ կհաջողվեր խուսափել այն բանից, որպեսզի տկն Ասյան ձեզ էլ չհիմարացներ, ինչպես նրան հաջողվում է անել բոլորին՝ հավատացնելով, որ այդ երկու տներն էլ իրենց սեփականությունն են:

Այժմ, այս հոդվածից հետո, ուզում ենք հուսալ, որ բոլոր մոլորվածների համար այս հարցում պարզություն կմտցվի: Եվ այսպես, ահա 3-րդ տարին է, ինչ պատասխանողի կազմակերպած շանտաժի, բողոքների, ինչպես նաեւ լրատվական միջոցների ակտիվ մասնակցության պատճառով մեր վճիռը չի կատարվում: Դա, իհարկե, առաջին հերթին հարկադիր կատարման ծառայության անբավարար աշխատանքի հետեւանք է:

Ի՞նչ իրավական պետություն կարող է կառուցել այն երկիրը, որի արդարադատության նախարարությունը տարիներ շարունակ ի վիճակի չէ ի կատար ածելու իր իսկ կայացրած եւ օրինական ուժ ստացած դատարանի վճիռը:

ԳԱՐԵԳԻՆ ԱՇՈՒՇՅԱՆ

Հասարակական

Ժողովրդավարությունն ազատականության հիմքն է

Ի՞նչ է ազատ մտքի մոտեցման կրթությունը

«Այն ազատությա՞ն մասին է, թե՞ ընդհանուր կրթության, որը՞ պետք ընդգրկուն է: Փորձենք բնորոշել:

Անցած տարի Բեյրութի ամերիկյան համալսարանում կայացած համաժողովում, Լիբանանի մշակույթի եւ բարձրագույն կրթության նախարար Մոհամեդ Յուսեֆ Բեյդունը ազատ մտքի մոտեցումը բնութագրեց որպես «մտքերը եւ հոգիներն ազատ դարձնելու կրթություն», «առանց ազատ մտքերի եւ հոգիների, որոնք պատրաստ են հարցեր տալ, դիմակայել դժվարություններ, ընտրություն կատարել այլընտրանքների մեջ ի բան մշակույթի, մարդկության եւ հասարակության, կրթությունը մնում է կրկնօրինակող եւ արտահայտում այն, ինչ գոյություն ունի»: «Ազատության վրա շեշտադրման հետ մեկտեղ այսպիսի կրթությունն ընդգծում է մարդկության էությունն ու արժեքը, մարդուն համարում կիզակետն ու առանցքը եւ գիտելիքի ստեղծողը: Ըստ այդ մոտեցման, գիտելիքն ազատում է մարդուն, իսկ մարդը՝ գիտելիքը, եւ այն դնում է շարժման մեջ՝ մարդկությանը ծառայելու համար, այլ ոչ թե վերածում մարդու աշխարհայացքը եւ գործողությունները սահմանափակող շրջանների»:

Արեւմտյան կրթական մոդելն անցիկ ժամանակաշրջանից ի վեր ձգտել է մարդուն դարձնել օրինակելի քաղաքացի եւ մարդ: Այդպիսի մարդու օրինակ է վերածննդի մարդը: Ինչպես Բեյրութի ամերիկյան համալսարանի նախագահ Ջոն Ուորբերթին նկարագրեց նույն համաժողովում. «Օրինակելի մարդը եւ քաղաքացին, քաղաքական իրավունքները պատասխանատվությամբ կիրառելու եւ կառավարման պարտականությունների նախաձախնդրությամբ կատարողն է... Օրինակելի մարդը պետք է մխրճվեր գիտելիքների լայն տարածքի մեջ: Նա պետք է սովորեր փիլիսոփայություն, տրամաբանություն, ճարտասանություն, բնական գիտություններ եւ մաթեմատիկա: Նա նաեւ պետք է հասկանար եւ զբաղվեր արվեստներով, այդ թվում երաժշտությամբ, պոեզիայով, բեմական արվեստով, նկարչությամբ եւ գծագրությամբ: Ի վերջո, մտքի այս կարողությունները պետք է գտնվեին առողջ մարմնի մեջ: Այստեղից էլ՝ մարդու ֆիզիկական հատկությունները մարմնամարզությամբ զարգացնելու անհրաժեշտությունը»:

«Կարեւոր է շեշտել, որ այն, ինչին մենք ձգտում ենք ազատ մտքի մոտեցման կրթության մեջ՝ միայն մասնագիտական ուսուցումը չէ, այլ ամենալայն իմաստով կրթությունը: Հայերենում տարբերությունն արտահայտվում է «կրթություն» կամ «դաստիարակություն» եւ «ուսում» բառերով: Դա սովորած մարդու եւ բազմակողմանի զարգացած ու մշակված մարդու միջեւ տարբերությունն է: Այսպիսի կրթությունը շեշտը դնում է մարդկության ազնվագույն ավանդույթների վրա»:

Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ ազատ կրթությունը

«Թեեւ անկախությունից ի վեր Հայաստանն ընդգրկված է եղել վերափոխման մեջ, ինչը բնորոշ էր խորհրդային կրթությանը՝ հակասում էր ազատ կրթության այն տիպին, ինչին կոչված է այս հաստատությունը:

Ազատ կրթությունն ընդհանրական է, այն չի ընդունում որեւէ մեկ գաղափարի գերազանցությունը մյուսի նկատմամբ: Այն փնտրում է ճշմարտությունը, որը կարող է անընդհատ զարգացման մեջ լինել, ինչպես հասարակությունը եւ մեզ շրջապատող աշխարհը: Մենք կփաթաթենք ձեզ, որ դուք հարցազրնեք ձեր լսածը, բայց միեւնույն ժամանակ հարգեք իրենց կարծիքը հայտնելու ուրիշների իրավունքը:

Ժողովրդավարությունն ազատականության հիմքն է: Մենք կարող ենք մեզ կոչել ժողովրդավար, բայց ժողովրդավարական հասարակությունը չի բնութագրվում միայն ընտրական արկղով եւ մասնակցություն ապահովող ընտրություններով: Ժողովրդավարությունն այն է, թե ինչպես ենք վերաբերվում միմյանց եւ ինչպես ենք հարգում միմյանց իրավունքները: Ժողովրդավարությունը մեր հասատությունները ղեկավարելու ձեւի մեջ է, երբ մարդիկ իրենք իրենց համարում են այդ հասատությունների աշխատանքային գործընթացի արդյունքը: Ահա թե ինչն է ընկած ժողովրդավարության հիմքում: Մենք պետք է շարժվենք մեր մեջ հաստատված արժեքներով, որոնք առաջնորդում են մեր աշխատանքն ու արժեքների գնահատումը: Դուք պետք է կայացնեք ձեր սեփական եզրակացությունները»:

«Իմ խոսքի սկզբում ես անդրադարձա այն ձեռքբերումներին, որոնք կարող եք ունենալ ազատ մտքի կրթության պայմաններում: Գաղափարը, որը ես ցանկանում եմ շեշտել իմ խոսքի վերջում, կարող է ծանոթ լինել ձեզանից ոմանց: Այն փոխազդեցության արդյունքում առաջացող սիներգիայի գաղափարն է:

Փոխազդեցություն տեղի է ունենում, երբ երկու գործոններ կամ տարրեր, խմբեր, անհատներ մեկտեղվում են կամ միասին են գործում: Երբ արդյունքը ավելին է, քան առանձին միավորների կամ տարրերի գումարը, մենք ասում ենք, որ փոխգործունեությունը հանգեցրել է մի նոր հավաքական սիներգիայի: Այդպիսի սիներգիան տարրերի եւ անհատների միջեւ կարող է լինել գումարային, կամ անգամ բազմապատիկ, իսկ ձեռքբերումները կարող են լինել առաջանցիկ: Սիներգիան մի իրավիճակ է, երբ փոխազդեցությունից իրական շահ ենք ունենում: Այդուհանդերձ, պետք է նշել, որ մենք կարող ենք ունենալ նաեւ բացասական գործոնների սիներգիա: Օրինակ, իմ մասնագիտության բնագավառում՝ համաձարակաբանության մեջ, ալկոհոլի եւ ծխախոտի փոխազդեցությունն ավելի քաղցկեղածին է, քան դրանցից ամեն մեկն առանձին: Մենք պետք է շեշտը դնենք դրական սիներգիայի վրա: Օրինակ՝ երկու գործընկերների կողմից գործարարության բնագավառում մի նոր մոտեցման ձեւավորումը, կամ դասախոսի եւ ուսանողի փոխհարաբերությունը, որի արդյունքում ստեղծվում է մի նոր ծրագիր գյուղատնտեսության բնագավառում: Սրանք դրական փոխազդեցության օրինակներ են, որոնք կարող են առաջ բերել սիներգիա: Ազդեցությունների, անհատական տարրերի կամ ներդրումների միայն գումար ունենալը բավ էլ արտասովոր կամ խորհրդավոր չէ:

Այն, ինչի համար մենք պետք է պայքարենք Հայաստանում, սիներգիայի զարգացումն է՝ լինի դա առողջապահության մեջ թե քաղաքական կյանքում, կառավարման թե ծարտարագիտության մեջ: Մենք պետք է ցույց տանք իրական ձեռքբերումները մեր աշխատանքի արդյունքներում եւ ոչ թե բավարարվենք ներդրումների պարզ գումարով: Սա մեկ այլ բնորոշիչ սկզբունք է, որը վերաբերում է ՀԱՀ-ի բոլոր ծրագրերին: Մենք պետք է ամեն ինչում զարգացնենք այնքան ավելի սիներգիա, որքան հնարավոր է:

Կարո՞ղ ենք արդյոք հասնել այնպիսի արդյունքների, որոնք մեր ներդրածից ավելի են: Դրան կարելի է հասնել արդյունավետ կրթությամբ»:

Փետրվարի 28-ին մեկնարկեց Հայաստանի ամերիկյան համալսարանի 2000 թ. ուսումնական տարին: Դահլիճում հավաքված բոլոր ֆակուլտետների ուսանողության համար առաջին դասախոսությունը կարդաց ՀԱՀ նախագահ, ԱՄՆ Ջոնս Հոփկինս համալսարանի համաձարակաբանության պրոֆեսոր Հարություն Արմենյանը:

Պրն Արմենյանի խոսքում հետաքրքրական մտքեր հնչեցին ժողովրդավարության, ազատականության, ազատ կրթության, արեւմտյան աշխարհընկալման մասին: Ներկայացնում ենք հատվածներ հիշյալ դասախոսությունից:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Վիճարկվում է Օջալանի հեղինակությունը

Վերջին ամիսներին Անկարայի իշխանություններին Քրդստանի աշխատավորական կուսակցության՝ ՊԿԿ-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի գիջողամտությունը նսեմացրել է նրա հեղինակությունը նախկին որոշ գինակիցների աչքին: Անցյալ տարվա հունիսին թուրքական դատարանի կողմից մահվան դատապարտված եւ Իմրալը կղզու բանտում պահվող Օջալանը նախ ուրդ ապստամբներին կարգադրեց դադարեցնել զինված պայքարը, ապա կոչ արեց հեռանալ թուրքական Քրդստանից: Ավելի ուշ նա ապստամբական շարժման գործիչներին հորդորեց անձնատուր լինել, իսկ հիմա էլ խոսում է ՊԿԿ-ն սոցիալ-դեմոկրատական կուսակցություն դարձնելու մասին: Ֆրանսիական «Էքսպրես» հանդեսը նշում է, որ Օջալանի այդ քայլերը խաթարափոթ վիճակ են առաջացրել քրդերի ապստամբական շարժման մեջ:

Թեեւ ՊԿԿ-ի «նախագահական խորհուրդը» լիովին ենթակա է Օջալանին, կուսակցության կենտրոնի որոշ նախկին անդամներ սկսել են իրենց անհամաձայնությունն արտահայտել նրա վերջին քայլերի կապակցությամբ: Այլախոհների թվում են մասնավորապես ՊԿԿ-ի հայտնի գործիչներ Սելահեդին Չելիքը եւ Սուրմու Գուլմուսը (ներկայումս երկուսն էլ բնակվում են Գերմանիայում), մինչեւ Օջալանի ձերբակալությունը Մոսկվայում ՊԿԿ-ի ներկայացուցիչը եղած Մահիր Վալաթը. Օջալանի դեմ ուղղված կծու պարսավագրի հեղինակ Սելիմ Չուրուկկայան եւ քուրդ առաջնորդի այսօր ընդհատակ անցած նախկին կինը: Գլուխ են բարձրացնում քրդական շարժման նաեւ ուրիշ գործիչներ:

Սակայն այս ներքին ընդդիմությունն առայժմ խիստ մասնատված է: Այլախոհներից ոմանք ուզում են շարունակել քրդերի զինված պայքարը, ուրիշներն էլ նախընտրում են շեշտը դնել ՊԿԿ-ի ժողովրդավարացման վրա, երրորդները դատապարտում են Օջալանի գիջումները, բայց ոչ գործելակերպը, իսկ չորրորդները խոսում են նրա «դավաճանության» մասին:

Տարաձայնություններ կան ոչ միայն տարագիրների շարքում, այլեւ բուն թուրքական Քրդստանում: Հենց ՊԿԿ-ի տարածած տեղեկությունների համաձայն, որոշ քուրդ հրամանատարներ, Օջալանի պահանջին հակառակ, հրաժարվում են դադարեցնել զինված պայքարը:

Պ. Ք.

ԱՄՆ-ում տասնյակ անմեղ մահապարտներ կան

Մահապատիժների թվով ԱՄՆ-ն անփիծելիորեն առաջատար տեղ է զբաղեցնում Արեւմուտքի երկրների մեջ: ԱՄՆ-ում մահապատիժը վերականգնվել է 1976 թ.: Այդ պահից ի վեր առաջին անգամն է, որ նահանգներից մեկում՝ Իլինոյսում, որոշել են սառեցնել առավելագույն պատժաչափի գործադրումը: Նահանգապետ Ջորջ Ռիանը թեեւ անձամբ մահապատժի կիրառման կողմնակից է, բայց մտահոգված է «այն ամոթալի փաստից, որ նահանգում 13 անմեղ մարդ կա մահապարտների ցանկում»: Նա խոստովանում է, որ Իլինոյսի նահանգում դատական սխալներն առավել մեծ չափերի են հասնում, ուստի նախատեսվում է հատուկ հանձնախումբ ստեղծել այդ սխալների խորհրդության համար:

«Պարիզիեն» թերթի տվյալներով, 1976 թ. մինչեւ օրս ԱՄՆ-ում ի կատար է ածվել ավելի քան 600 մահապատիժ: Միայն Տեխասի նահանգում դրանց թիվը հասել է 201-ի: Ներկայումս ԱՄՆ-ում մահապատժի դատապարտված անձանց ընդհանուր թիվը շուրջ չորս հազար է: Մյուս կողմից, 1976 թ.-ից ի վեր արդարացվել է 80 մահապարտ: Դա վկայում է, որ անգամ նման պատասխանատու վճիռներ կայացնելիս զգալի թվով դատական սխալներ են թույլ տրվում:

1998 թ. վերջերին Իլինոյսում առաջին անգամ անցկացվեց դատական սխալների եւ մահապատժի հարցերին նվիրված խորհրդաժողով, որին մասնակցում էին երեք տասնյակ արդարացված նախկին մահապարտներ: Նրանցից մեկը՝ Սոնյա Չեկոբսը, ջահել տանտիկին էր, երբ Ֆլորիդայում մահապատժի դատապարտվեց երկու ոստիկանի սպանության մեղադրանքով: Նա արդարացվեց 17 տարի անց, երբ արդեն տասիկ էր:

«Չիկագո տրիբյուն» օրաթերթը հետաքննություն է անցկացրել Իլինոյսի նահանգում կայացված 300 մահավճռի առնչությամբ: Հետաքննությունից պարզվել է, որ տասնյակ դատավարությունների ընթացքում նշանակված դատապաշտպանները հանդես գալու հնարավորություն չեն ունեցել կամ ննջել են նիստերի ժամանակ: Մահավճիռներից քառասունը կայացվել է բանտային իրազեկիչների տեղեկատվության հիման վրա: Շատ դեպքերում դատաքննությունը հապճեպորեն անցկացվել է հենց ոստիկանության կողմից:

Իլինոյսցի իրավագետ Լոուրենս Մարշալը գտնում է, որ դատական կոպիտ սխալներ են թույլ տրվում ԱՄՆ-ի նաեւ մյուս նահանգներում: Դրանց հետեւանքով ներկայումս երկրի բանտերում բազմաթիվ անմեղ մահապարտներ կան:

Հանրային կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ ամերիկացիների մեծամասնությունը կողմ է մահապատժին: Բայց վերջերս մարդկանց մտայնության մեջ փոփոխություններ են նկատվում: Ներկայումս երկրի էկրաններին հաջողությամբ ցուցադրվող «Փոքորիկ» ֆիլմում ուրվագծվում է բռնցքամարտիկ Ռուբին Քարտերի պատմությունը, որը մահվան էր դատապարտվել իր չգործած ոճրի համար:

Լոուրենս Մարշալի կարծիքով, ԱՄՆ-ում ընդհանուր մթնոլորտը ներկայումս փոփոխման միտումներ ունի: «Մարդիկ սկսում են գիտակցել, որ անմեղները եւս կարող են ենթակա լինել մահապատժի վտանգին, եւ դա խորհելու առիթ է տալիս», ասում է Մարշալը:

Պ. Ք.

ԱԶԳ

Մշակույթ

Անվանի լեզվաբանը

Սերգեյ Աբրահամյանի 75-ամյակի առթիվ

Լրացավ հայագիտության երախտավորներից մեկի՝ նշանավոր լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 75-ամյակը: Ս. Աբրահամյանը ծնվել է Արցախ աշխարհի՝ գեղատեսիլ մի անկյունում՝ Հադրութի Տումի գյուղում, որտեղ էլ սացել է միջնակարգ կրթություն: Գրեթե պատանի հայտնվել է հայրենական պատերազմի հորձանուտի մեջ, ծանր վիրավորվել եւ զորացրվելուց հետո՝ 1945-ին, ընդունվել Երեւանի համալսարանի բանասիրության ֆակուլտետ, 1950-ին գերազանցությամբ ավարտել այն եւ ընդունվել ասպիրանտուրա, արդեն 1953-ին փայլուն կերպով պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը եւ աշխատանքի անցել ՀՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտում:

Գիտական գործունեության առաջին քայլերից իսկ Ս. Աբրահամյանը երեւան է հանում ներհուն հետազոտողի, վերլուծող տեսաբանի իր ակնառու ծիրը: հայերենագիտության ասպարեզ էր մտնում տեսական լուրջ գիտելիքներով՝ զինված, գիտության մեջ իր ասելիքն ու գիտական ուրույն ոճն ունեցող մի անհատականություն: Ս. Աբրահամյանի պատկառելի գիտական վաստակը՝ մոտ երկու տասնյակ գրքեր ու հարյուրից ավելի գիտական հոդվածներ, կրում է գիտնականի յուրահատուկ անհատականության դրոշմը: Առաջին մենագրությունը՝ «Արդի հայերենի դերանունները» (1956) քերականագիտության մեջ տարակարծիք մեկնաբանությունների առիթ տված դերանուն խոսքի մասի ճանաչությանն էր նվիրված եւ արդեն իսկ ի հայտ էր բերում գիտնականի ինքնատիպ ծեռագիրը՝ լեզվական փաստերի բծախնդիր ու հիմնավոր վերլուծություն, տրամաբանորեն ստույգ դասակարգումներ, տեսական լուրջ ընդհանրացումներ: 1959-ին լույս տեսած երկրորդ մենագրությունը՝ «Ժամանակակից հայերենի չքեփվող խոսքի մասերը», որում համակողմանիորեն քննված են հայերենի մակբայները, կապերը, շաղկապները, եղանակավորող բառերն ու ծայնարկությունները, կարեւոր ներդրում եղավ հայերենի ծեւաբանական կառուցվածքի գիտական նկարագրությունն ամբողջացնելու առումով: Ինչպես դերանուններին նվիրված գրքում, այստեղ էլ գիտնականն անհրաժեշտաբար առնչվում է քերականագիտության առանցքային խնդիրներից մեկին՝ խոսքի մասերի որոշման տեսական հիմքերի ու դրանց դասակարգման սկզբունքների սահմանմանը: Բարդ ու բազմակնճիռ մի խնդիր է սա, որ վաղուց ի վեր զբաղեցնում է տեսաբանների միտքը: 1965-ին լույս տեսած իր դոկտորական ատենախոսության մեջ («Չքեփվող խոսքի մասերը եւ նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում») Ս. Աբրահամյանը, խորացնելով նախորդ աշխատությունների տեսական դրույթները, յուրատեսակ ընդհանրացնում է խոսքի մասերի որոշման ու դասակարգման հարցերում՝ հայերենագիտության կուսակած փորձը եւ հիմնվելով դրա վրա՝ այս ասպարեզում ըստ էության նոր խոսք է ասում: Նվված աշխատության մեջ ներկայացված՝ խոսքի մասերի այսպես կոչված բազմաստիճան դասակարգման տեսությունը, որ հետագայում կապվեց Ս. Աբրահամյանի անվան հետ եւ այսօր առավել ընդունվածներից է, եղած իմաստաբանական դասակարգումներից թերեւս ամենից ամբողջականն է ու կիրառված տեսական սկզբունքների առումով առավել հետեւողականը:



Սերգեյ Աբրահամյանի գիտական հետազոտությունների շրջանակը ներառում է հայերենի կառուցվածքի մյուս նիստերը եւս. 1962-ին լույս տեսած «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» գրքում առաջին անգամ գիտական հանգամանալի հետազոտության առարկա են դառնում արդի հայերենի նախադասության տեսությունը՝ նրա որոշ տեսակների (միակազմ, քերի) եւ հնչերանգային տիպերի գործնական նկարագրության մի շարք խնդիրներ: Հայոց լեզվի քերականական կառուցվածքի, բառակազմության ու հնչյունաբանության տարբեր հարցերին նվիրված Ս. Աբրահամյանի բազմաբնույթ հետազոտությունների արդյունքները հանրագումարվում են հետագա տարիներին հրատարակած մի շարք հիմնարար աշխատությունների, դասագրքերի ու ծեռնարկների մեջ («Ժամանակակից հայերենի քերականություն» 1969, 1975, «Ժամանակակից գրական հայերեն», 1981 եւ այլն): Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի գիտական կենսագրությունն անխզելիորեն կապված է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ, որի ժամանակակից հայոց լեզվի բաժնի անփոփոխ ղեկավարն է նա 1959-ից սկսած: Տասնյակ արժեքավոր ուսումնասիրություններ են ստեղծվել այդ տարիներին Ս. Աբրահամյանի գիտական ղեկավարության ներքո. դրանցից հատուկ հիշատակության է արժանի «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր գիտական քերականությունը, որի ստեղծման նախաձեռնողը, գիտական ղեկավարն ու մի շարք բաժինների հեղինակը պրոֆ. Ս. Աբրահամյանն է: Նա գործուն մասնակցություն է ունեցել նաեւ նույն այդ ինստիտուտում կազմված առոհատոր «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի» աշխատանքներին՝ իբրեւ 4-րդ հատորի գլխավոր խմբագիր եւ 1-ին հատորի խմբագիր:

Սերգեյ Աբրահամյանի բեղմնավոր գիտական կենսագրության մեջ սերտորեն ներհյուսված է նրա նույնքան բազմաբնույթ մանկավարժական ու հասարակական գործունեությունը: Լեզվի ինստիտուտում կատարած գիտական աշխատանքը նա՝ բոլոր տարիներին զուգակցել է մանկավարժական գործունեության հետ, դասավանդել է հանրապետության առաջատար բուհերում, ղեկավարել 20-ից ավելի ասպիրանտների, որոնցից շատերն այսօր հայոց լեզվի ճանաչված մասնագետներ են, գիտնականներ, դասախոսներ: Ս. Աբրահամյանը մշտապես եղել եւ մնում է մայրենի լեզվի դպրոցական դասավանդման, նրա մշակման ու նորմավորման հարցերին նախանձախնդիր գիտնական եւ այս մարզերում էլ իր ծանրակշիռ նպաստն է բերել: Նրա գրչին են պատկանում մի շարք ուսումնական, մեթոդական ծեռնարկներ, դասագրքեր, մասնավորապես հայոց լեզվի նախասիրական պարապմունքների «Հայոց լեզվի բառ եւ խոսք» (1978) ծեռնարկը, սփյուռքահայ դպրոցների համար հեղինակակիցների հետ կազմած «Հայերէն լեզուի դասագիրքը» (1966), «Աշակերտի խոսքի զարգացումը» (1973) գիրքը եւ վերջապես 1984-ից միջնակարգ դպրոցներում գործող հայոց լեզվի շարահյուսության դասագիրքը, որը շատ ու շատ մասնագետների համոզմամբ, եղած այդ կարգի դասագրքերի մեջ ամենից հաջողվածն է:

Տասնամյակներ շարունակ Ս. Աբրահամյանը գնահատելի ավանդ է ներդնում ՀՀ պետական տերմինաբանական կոմիտեի, ապա եւ լեզվի պետական տեսչության աշխատանքներում՝ իբրեւ հայերենի նորմավորման, լեզվաշինարարականության հարցերին նվիրված մի շարք կարեւոր նախագծերի հեղինակ:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանն այսօր էլ լի է ավյունով ու շարունակում է ստեղծագործել: Քաջառողջություն եւ արեւաշատություն ենք մաղթում մեր սիրելի ուսուցչին, մեծ գիտնականին, մտավորականի բարձր նկարագրի տեր մարդուն՝ ի շահ հայագիտության զարգացման:

ԼԵՈՆԻԴ ԹԵԼԵՑՈՒ

ԱՍՏ

Դոկտ. Հանեսյանը 1999-ի մրցանակի դափնեկիր

Նյու Ջերսիի տեխնոլոգիայի ինստիտուտի քիմիական ճարտարագիտության դասախոս, դոկտ. Տիրան Հանեսյանը «երկար տարիներ իր ուսանողներին հաջողեցնելու եւ նրանց ներշնչման աղբյուրը հանդիսանալու, ինչպես նաեւ քիմիական ճարտարագիտության դասավանդման որակը բարձրացնելու եւ հարստացնելու իր երկարամյա նվիրվածության համար» վերջերս արժանացել է այդ ինստիտուտի «Վերակացուների վարչության հասարակական եւ ինստիտուտային ծառայությունների» 1999 թ. մրցանակին, հաղորդում է Բոստոնի «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Դոկտ. Հանեսյանն այդ ինստիտուտում դասավանդել է 1963-ից եւ 1975-88 թթ. եղել քիմիական ճարտարագիտության, քիմիական եւ մթնոլորտային գիտությունների բաժնի ամբիոնի վարիչը, իր թեկնածուական եւ դոկտորական ատենաշխատությունները (համապատասխանաբար 1952 եւ 1961 թվերին) սացել է Կոռնելի համալսարանից: Պատվավոր անդամ է քիմիական ճարտարագիտության ամերիկյան ինստիտուտի եւ ճարտարագիտության դասավանդման ամերիկյան ընկերության: Արժանացել է բազմաթիվ այլ հեղինակավոր մրցանակների եւ գրանտների: Որպես Ֆուլբրայթի գիտաշխատող այցելել է Հայաստան եւ 1982-93 թթ.-ին դասավանդել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Բացի մասնագիտականից, Հանեսյանը լայն գործունեությամբ ճանաչված հեղինակություն է նաեւ հայկական համայնքում, Նիագարա Ֆոլզի (Նյու Յորք) սուրբ Սարգիս հայկական առաքելական եկեղեցու ծխական խորհրդի գանձապահն է եղել, Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի, ինչպես նաեւ ՀԲԸՄ-ի կրթաթոշակների եւ կենտրոնական հանձնախմբերի տնօրենների վարչության անդամ: Մեծ նպաստ ունի նաեւ Ամերիկայի հայկական եկեղեցու երիտասարդական կազմակերպության եւ Հայ ուսանողների ասոցիացիայի գործունեություններում:

Հ. Օ.

ՀԱՅԸ ՀԱՅՐԵՆԻՔ Է ԵԿԵԼ

«Դա մի՞թե փիղ է...»

Նաեւ զումարվում ենք



Վերջերս առիթ ունեցանք լինելու Հայաստան մշտական բնակության եկած մի քանի իրանահայ ընտանիքների հավաքին ու հանդիպեցինք Վանիկ Պետրոյանին: Ինչպես եւ հանդիպման մյուս բոլոր մասնակիցները, այնպես էլ Վանիկ Պետրոյանն Իրանում իր գործն ու մշտական վաստակն է ունեցել: Բայց հիմնական աշխատանքից զատ, նա եղել է «Արարատ» մարզամշակութային ընկերության վարչության անդամ, հետո 4 տարի (1992-96 թթ.) ղեկավարել է այդ կազմակերպությունը: 10 տարի շարունակ Իրան այցելած ամեն մի երգիչ, ամեն մի արտիստ, բպնաստեղծ ու մարզիկ ծանոթ է եղել Վանիկ Պետրոյանին, որովհետեւ Իրանում նրանց հոգսերը հոգացել է Վանիկ Պետրոյանը: Միլվա Կարապետյանը, Ռազմիկ Դավոյանը մինչեւ օրս էլ հիշում են, թե ինչպիսի սրտաբաց, հայեցի ընդունելությունների են արժանացել «Արարատ» կազմակերպության ղեկավարի կողմից: Նույնպիսի ջերմ վերաբերմունքի է արժանացել նաեւ Վահագն Դավթյանը: Մինչեւ օրս էլ Իրանում աշխատում են Հայաստանի մի քանի մարզիկներ, ովքեր աշխատանքային պայմանագրեր կնքելիս օգտվել են «Արարատի» միջնորդություններից:

Ու ահա, այսօր Վանիկ Պետրոյանը Հայաստանում է, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Սխալ կլիներ ասել, թե շահագրգռություններ չուներ լվացող միջոցների իր «Շող» արտադրությունը Երեւանում կազմակերպելիս: Բայց միայն դրանով չէ, որ այս մարդու մասին կարելի է կարծիք կազմել: «Գիտե՞ք, թե օտար երկրում ապրող հայի համար ինչպիսի բախտավորություն է հայրենիք դառնալը, ինչպիսի երջանկություն է, երբ իր զավակները հայկական համալսարանի ուսանողներ են, հայեցի ուսում են սանում, երբ փողոց դուրս գալիս քո զավակին ոչ մեկը չի վիրավորում: Դա մի՞թե փիղ է...», ասում է Վանիկ Պետրոյանը:

Համատարած արտագաղթի այսօրվա պայմաններում Հայաստանի Հանրապետության բնակիչների թիվն ավելացել է չորս հայով՝ Պետրոյան ընտանիքի անդամներով: Նրանք հայրենիք են եկել ոչ թե մեկ ուսող բերան եւս ավելացնելու, այլ ներդրում են արել, աշխատատեղեր են ստեղծել, 12 մարդու մշտական վաստակ ապահովել: Դա մի՞թե փիղ է...

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ

«Փիգարոն» դրվատում է Վարդան Մամիկոնյանին

Փարիզի «Յառաջ» օրաթերթից տեղեկանում ենք, որ Ֆրանսիայի մայրաքաղաքի «Գավո» համերգասրահում փայլուն ելույթ է ունեցել տաղանդավոր դաշնակահար Վարդան Մամիկոնյանը: Նույնիսկ «Ֆիգարո» ազդեցիկ թերթի դժվարահաճ քննադատ Պիեռ Փքին հունվարի 31-ի համարում գովասանքի խոսքեր է բռայլել Վարդանի հասցեին: «Մոնտե Կառլոյում՝ վարպետ կատարողների առաջին մրցույթում հաղթելուց ի վեր Վարդան Մամիկոնյանը գրեթե ողջ աշխարհում շարունակում է իր գեղեցիկ կարիերան, որը նրա շատ մեծ տաղանդի վկայությունն է: Ափսոս, որ Ֆրանսիայում նրան ավելի հաճախ չեն ունկնդրում, քանզի ներկայիս խոշոր դաշնակահարներից մեկն է»՝ այսպես է սկսվում Պիեռ Փքիի մեկնաբանությունը: Ապա նա գրում է Մամիկոնյանի «անբերի տեխնիկայի» մասին, որը «ի սպաս է դրվում բանաստեղծական զգացողությանը»:

Այնուհետեւ Պիեռ Փքին նկարագրում է Վարդան Մամիկոնյանի փայլուն մենահամերգը, որի ընթացքում հայ դաշնակահարը կատարել էր Բեթհովենի դո մաժոր 3-րդ սոնատը, ինչպես նաեւ Պրոկոֆեւի, Դեբյուսիի, Ռավելի որոշ ստեղծագործություններ:

Պ. Բ.

ՕՐՎԱԾՈՒՅՑ

Մարտի 1.

- 1815 թ. Նապոլեոնը փախել է էլբա կղզուց եւ կրկին նստել կայսերական գահին: Նապոլեոնի թագավորության այդ ժամանակաշրջանը պատմության մեջ մնաց «100 օր» անունով: Ինչպես հայտնի է, Վաթերլոոյի մոտ դաշնակիցներից պարտություն կրելով, Նապոլեոնը վերջնականապես ախտորվեց Ս. Հեղինե կղզի:
- 1863 թ. ծնվել է ռուս բանաստեղծ, արձակագիր, տեսաբան Ֆյոդոր Սոլոգուբը: Սոլոգուբին համառուսական հռչակ բերել «Մանր սատանան» վեպը: Անդրեյ Բելին գրել է, թե Սոլոգուբն առավել հանճարաչ գրողների քառյակի մեջ է՝ Գորկու, Անդրեեւի, Կուպրինի շարքում:
- 1867 թ. ծնվել է հայ գրող Նար-Դոսը:
- 1869 թ. Մենդելեեւը ստեղծեց քիմիական տարրերի աղյուսակը: Այն վարկածն է տիրում, թե վերոնշյալ աղյուսակը նա տեսել է երազում, եւ արթնանալուց հետո ուղղակի գրի առել: Մենդելեեւն ասել է, թե այդ խնդրի մասին ինքը մտածել է 20 տարի:
- 1881 թ. հաջողությամբ պսակվեց նարոդավոլեցների ահաբեկչությունը Ալեքսանդր 2-րդ ռուսաց ցարի դեմ:
- 1892 թ. ծնվել է ճապոնացի գրող Ակուտագավա Ռյունոսկոն: Ակուտագավան գրել է փայլուն, հղկված ոճով փոքրիկ նովելներ, որոնք նրան փառք բերեցին:
- 1901 թ. ծնվել է բանաստեղծ Սարմենը: Նա ծանր մանկություն է ունեցել, ծնողները զոհ են գնացել թուրքական յաթաղանին, իսկ բանաստեղծը մեծացել է մանկատանը:
- 1934 թ. մահացել է հայ ճարտարապետ Թորոս Թորամանյանը: Նա ճարտարագիտություն ուսումնասիրելու նպատակով եղել է շատ երկրներում: Նրա ջանքերով վերականգնվել են միջնադարյան բազմաթիվ հուշարձաններ:
- 5 տարի առաջ սպանվեց Վլադ Լիստեւը՝ փայլուն լրագրողը, հրաշալի մասնագետը, իր գործի վարպետը, մեծ հոգու ու չիրականացած հույսերի ու նպատակների տեր մարդը:
- Այս օրը հին հայկական տոմարով Մեհեկան ամսվա Արեգ օրն է:

ՆԱԻԲԻ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

Ընբշամարտի նվիրյալի գործը շարունակվում է

Մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում անցկացվեց ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ալբերտ Մնացականյանի ավանդական, թվով չորրորդ հուշամրցաշարը:

Ալբերտ Մնացականյանը հունահռոմեական ոճի ընբշամարտի մեր ամենահեղինակավոր մասնագետներից էր: Ճանաչված ընբիշ է եղել, բազմիցս նվաճել է Հայաստանի չեմպիոնի կոչումը, դարձել է ԽՍՀՄ առաջնության մրցանակակիր: Մրցելույթները թողնելուց հետո նա սանձնեց մարզչի դժվարին ու պարտավորեցնող աշխատանքը: Մնացականյանն այստեղ մեծ հաջողություններ հասավ: Պատրաստեց մեծ թվով ընբիշներ, նրանցից Բենուր Փաշայանը դարձավ աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն, Ալֆրեդ Տեր-Մկրտչյանը՝ աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր: Տասնյակ սաներ հաղթանակներ նվաճեցին ամենատարբեր կարգի մրցումներում:

Մրցաշարն այս անգամ նվիրված էր նշանավոր մարզչի ծննդյան 70-ամյակին: Մրցագորգ ելան հանրապետության տարբեր մարզերի 80 երիտասարդ ընբիշներ (1980-82 թթ. ծնված): Կային նաեւ մի քանի պատանի մարզիկներ, որոնց մրցավարական հանձնաժողովը հնարավորություն տվեց մրցել տարիքով ավելի մեծերի հետ: Բոլոր քաշային կարգերում մրցանակակիրները որոշվեցին համառ պայքարից հետո, բացառությամբ ծանր քաշային՝ների, որտեղ հաղթող հռչակված ընբիշը մրցակից չուներ:

Ըստ քաշային կարգերի, հուշամրցաշարի հաղթողներ դարձան հետեւյալ ընբիշները. 50 կգ՝ Ռոման Ամոյան (Երեւան), 54 կգ՝ Սահակ Հովհաննիսյան (Էջմիածին), 58 կգ՝ Վահրամ Հունանյան (Ախուրյան), 63 կգ՝ Մխիթար Հունանյան (Ախուրյան), 69 կգ՝ Վահագն Հակոբյան (Արարատ), 76 կգ՝ Կարուշ Կիրակոսյան (Ախուրյան), 85 կգ՝ Ռոբերտ Պետրոսյան (Էջմիածին), 97 կգ՝ Սերոբ Մուրադյան (Էջմիածին), 130 կգ՝ Արսեն Մանուկյան (Էջմիածին):

Բոլոր մրցանակակիրները պարգեւատրվեցին, իսկ առավել աչքի ընկած ընբիշներին հանձնվեցին նաեւ հատուկ մրցանակներ:

Մրցաշարի ավարտից հետո խնդրեցինք կարծիք հայտնել հանրապետության վաստակավոր մարզիչ, մրցումների գլխավոր մրցավար Հարություն Խաչատրյանին: «Երկար տարիներ Ալբերտ Մնացականյանի հետ ձեռ-ձեռքի տված աշխատել եմ «Դինամո» ընկերությունում, ասաց նա, շատ բան եմ ես սովորել նրանից: Ուրախ եմ, որ մեր հարգելի ու սիրելի ուսուցչի հիշատակին նվիրված նման մրցումներ են անցկացվում: Այս մրցաշարին մասնակցում են մեր համարյա բոլոր ուժեղագույն երիտասարդ ընբիշները: Գոհացնում է նրանց պատրաստականության մակարդակը: Կարծում եմ, որ մոտ ապագայում նրանցից մի քանիսը կարող են համալրել մեծահասակների հավաքականը»:

Հուշամրցաշարի մասնակիցների գոտեմարտերին ուշի-ուշով հետեւում էր Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Բենուր Փաշայանը: Չէինք կարող աչքը բաց թողնել ու ճեպազրույց չունենալ Ալբերտ Մնացականյանի սանի հետ: «Նա մեծ մարզիչ էր, Մարդ, Մանկավարժ: Բնությունը շռայլորեն էր օժտել Մնացականյանին, եւ նա ասես այդ շնորհն ուզում էր՝ կիսել ուրիշների հետ: Նա ամեն ինչ անմնացորդ տալիս էր մարդկանց: Նրա մարզչական աշխատանքի հիմքում պատանու դաստիարակությունն էր: Հաճախ էր ասում՝ նախ եւ առաջ պետք է մարդ լինել, հետո՝ մարզիկ: Մի քանի տարի առաջ նրան կորցնելով, մեծություն կորցրեցինք: Բայց Ալբերտ Մնացականյանն իրենից հետո շատ բան թողեց: Լավ է, որ իր գործը շարունակվում է: Եվ շարունակողները նրա համախոհներն են՝ կրտսեր գործընկերները: Մտադիր ենք ընբշամարտի ակնառավոր մասնագետի հուշամրցաշարի շրջանակները լայնացնել՝ հետագայում այն դարձնելով միջազգային»:

Ռ. Ա.

USAID

SIBLEY International

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, ՍԻԲԼԻ ինքնրնեբընլ հաշվառական հաշվառման համակարգի բարեփոխման ծրագիրը, Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիան համատեղ կազմակերպում են անվճար անգլերեն լեզվի նախապատրաստական դասընթացներ բուհերի հաշվապահության դասախոսների համար՝ միջազգային TOEFL եւ GMAT քննությունների հանձնման նպատակով:

Դասընթացներին կարող են մասնակցել այն դասախոսները, որոնք կցանկանային կատարելագործել իրենց լեզվական ունակությունները ԱՄՆ-ում մագիստրոսի աստիճան ստանալու, ինչպես նաեւ վերապատրաստման ակնկալվող ծրագրերին մասնակցելու նպատակով:

Հարցերի եւ դիմումների համար խնդրում ենք դիմել Մելիքյան Հասմիկին կամ Հովհաննիսյան Վարսիկին:
Հեռ. 52-69-41,
58-07-45:
Դիմումների ընդունման ժամկետը՝ մինչեւ մարտի 3-ը:

ՀԵՌՈՒՏԱՑՈՒԱԳՐԵՐ

1

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.15 Իմ տունը
10.20 Մամուլի կրպակ
10.30 Հեռուստասերիալ «Կարմիր ալպինիստներ»
11.00 Դավիթ Հալաջյան «Լույսի մեսսա»
11.40 Գ/Ֆ «Խոսիր համարձակ»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մանկության մոլորակ
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Առողջ լոտո»
19.50 Պարմանի
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Գ/Ֆ «Մահացու մտքեր»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

2

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.25 Հրաշալի ընկերախումբ
17.00 Ջունգլիների կանչը
17.25 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Դիմակներ-շոու
20.00 Մարդը եւ ծեծնը
20.45 Գ/Ֆ «Երմակ» (2-րդ սերիա)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Զգույշ, փող է» (դերերում Դ. Քյուսակ, Դ. Մազար, ԱՄՆ, 1993 թ.)
00.50 Քաղաքակրթություն
01.25 Նորություններ
01.40 Գ/Ֆ «Այրվիր» (դերերում Մ. Բրանդո, է. Մարկես, Իտալիա-Ֆրանսիա, 1968 թ.)

ՌՏՊ

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.20 Բարի լույս, Ռուսաստան
9.20 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
9.35 Ընտանեկան նորություններ
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-սպորտ»
11.00 Քվանտային բժշկագիտություն
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՄՍ
13.30 Մոսկվա-Սինսկ
14.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր

1 Մարտ

14.20 Հեռուստահանդես «Կանանց խաղաք»
15.00 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Վայրի հրեշակը»
16.40 Իմ ընտանիքը
17.35 Խանութ բազմոցի վրա
18.20 Ուշադրություն
19.00 Հեռուստախաղ «Մանկան շուրթերով»
19.30 Սերիալ «Օրենք եւ կարգ»
20.25 Ինքդ քեզ ռեժիսոր
21.45 Սերիալ «Այրված ափ»
22.45 Կինոյի ժամ. Վալերի Գարկալինը, Ելենա Սաֆոնովան, Վիկտոր Պավլովը «Կատալա» ֆիլմում
00.25 Արմեն Ջիգարխանյանը «Թատրոն+TV» հեռուստահանդեսում
01.35 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
01.50 Խանութ բազմոցի վրա

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Հորիզոնական

1. Աղանա: 4. Տուն: 5. Նան: 7. Մարաբու: 8. Անանիա: 11. Ամրա: 12. Ուրաշիմա: 13. Տարի: 17. Ցինիզմ: 18. Աբեղա: 20. Անանաս: 22. Տուֆ: 23. Շրջան: 24. Բաղամ: 25. Նամ: 29. Տատրակ: 31. Եկինի: 32. Ալիկին: 34. Տուվա: 35. Վանիլին: 38. Սնրի: 41. Ածական: 42. Դերբայ: 44. Երե: 45. Իսկ: 46. Ջամպա:

Ուղղահայաց

1. Անաբար: 2. Ուա: 3. Անոնիմ: 4. Տորֆ: 6. Նանե: 7. Մարտիկ: 9. Ավանակ: 10. Աշխեն: 11. Արի: 14. Իկա: 15. Ամերիկա: 16. Բաբայան: 17. Ցիտաս: 18. Արամե: 19. Ալանի: 21. Սիմոն: 26. Գրիվնա: 27. Քիմիա: 28. Սիդնեյ: 30. Ամս: 33. Իլի: 36. Արալեզ: 37. Իբեքիա: 39. Բազե: 40. Աբակ: 43. Համ:



Հորիզոնական

1. Հայկական հեթանոսական տոմարի 3-րդ ամիսը: 4. Հայ դերասանուհի ... Հրաչյա: 11. Պետություն Եվրոպայում: 12. Հայ նկարիչ («Աշնան պտուղներ», «Ծաղկավաճառուհին»): 15. Ջրային քաղցկեղ: 16. Հայ կոմպոզիտոր, «Կտոր մը երկինք» կինոնկարի երաժշտության հեղինակը: 17. Գեղ Հայկական լեռնաշխարհում, Արաքսի աջ վտակը: 20. Հայ օպերային երգիչ: 21. Սխրագործություն, ...: 22. Թուրքիայում ֆեոդալից կախում ունեցող գյուղացիական խավ: 25. Թանկարժեք բուրդ ունեցող ցեղի այծ: 26. Արեւմտաուկրաինական հողերի պատմական անվանումը: 28. Քաֆուր, տերմենների շարքի կետոն: 30. Հայ թատերական գործիչ, ռեժիսոր: 35. Ասպվածաշնչյան կանացի անուն: 36. Հնդիկ ժողովուրդը նրան անվանում է Մահաթմա՝ Մեծ ոգի: 37. Հունգարացի կոմպոզիտոր: 40. Ամերիկացի թենիսիստ: 41. Հայկական ազգանուն: 42. Պատերազմի ժամանակ թշնամուց գրաված ունեցվածք: 45. «Բոլտուն» վեպի հեղինակը: 46. Հայ արքայատոհմ Մեծ Հայքում: 47. Հնդիկ շախմատիստ: 48. Վանք, գիտամշակութային կենտրոն Կիլիկիայում:

Ուղղահայաց

2. Զարդաքար: 3. Քաղաք, որտեղ տպագրվել է հայ մամուլի առաջնեկը: 5. Հայրենական պատերազմում 89-րդ հայկական դիվիզիայի առաջին հրամանատարը: 6. Եղանակավորող բառ: 7. Մրջնալղեհիդի ջրային լուծույթը: 8. Հերոս Մուրացանի «Առաքյալ»-ում: 9. Իսպանական եւ միջազգային բանվորական շարժման կին գործիչ: 10. Ուռազգի ծառ: 13. Հնամաբ զգեստ: 14. Խորհրդային արբանյակի անվանում: 18. Ֆրանսիացի գրող, բարոյախոս, դուքս: 19. Լենինգրադի օպերայի եւ բալետի թատրոնը մինչեւ Կիրովի անունով կոչվելը ինչպե՞ս է անվանվել: 23. Սոճազգի ծառ: 24. «Թալեյրան» կենսագրական վեպի հեղինակը: 27. Հայ ծանրորդ: 29. Տիեզերական մարմին: 31. Մերձարեւադարձային ծառ: 32. Այծատերեւազգիների ընտանիքի ծառ: 33. Օտյանի հերոսներից: 34. Հայկական լրատվական գործակալություն: 38. Հայ կինոռեժիսոր: 39. Ռուս բանաստեղծ: 43. Լեւոն Շանթի հերոսներից ... Պայլ: 44. Վայրի պտուղ:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Հաշվի առնելով ֆինանսական շուկայում տոկոսադրույքների անկման միտումները եւ ղեկավարվելով առողջ տրամաբանությամբ, «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը հաստատում է ավանդների ընդունման հետեւյալ պայմանները

ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐ

	ՀՀ դրամով ավանդների սակագներ տոկոսագումարի ամսական վճարումով			
Ավանդի գումար, հազ. դրամ	Ավանդի ժամկետ, ամիսներ			
	1	3	6	12
100-5000	12,0%	14,0%	15,5%	17,5%
5001-25000	12,0%	14,5%	16,0%	18,0%
25001-50000	12,0%	15,0%	16,5%	18,5%
50001-100000	12,0%	15,5%	17,0%	19,0%
100001 եւ ավելի	Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.

ՀՀ դրամով ավանդների սակագներ տոկոսագումարի վճարումով ժամկետի վերջում			
Ավանդի ժամկետ, ամիսներ			
1	3	6	12
12,0%	14,7%	16,6%	19,0%
12,0%	15,2%	17,1%	19,6%
12,0%	15,8%	17,7%	20,2%
12,0%	16,3%	18,3%	20,7%
Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.

	ԱՄՆ դոլարով ավանդների սակագներ տոկոսագումարի ամսական վճարումով			
Ավանդի գումար	Ավանդի ժամկետ, ամիսներ			
	1	3	6	12
200-1000	11,0%	13,0%	14,5%	15,5%
1001-5000	11,0%	13,5%	15,0%	16,0%
5001-10000	11,0%	14,0%	15,5%	16,5%
10001-50000	11,0%	14,5%	16,0%	17,0%
50001 եւ ավելի	Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.

ԱՄՆ դոլարով ավանդների սակագներ տոկոսագումարի վճարումով ժամկետի վերջում			
Ավանդի ժամկետ, ամիսներ			
1	3	6	12
11,0%	13,6%	15,4%	16,6%
11,0%	14,1%	16,0%	17,2%
11,0%	14,7%	16,5%	17,8%
11,0%	15,2%	17,1%	18,4%
Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.	Պայմանագր.

BSC Business Support Center

Սոկոլովի փ. 24/2
Երեւան 375002, Հայաստան
Հեռախոս՝ 151034, 528279, 528654, 561064, 7812 (գաղ.)
bsc@bsc.am
www.bsc.am

BUSINESS SUPPORT CENTER

- Գործարար խորհրդատվություն
- Գործարար դասընթացներ
- Առեւտրի խթանում եւ տեղեկատվություն
- Գործարար օրենսդրության խորհրդատվություն

Հուսալի

նեւրոհոգեբուժական օգնություն

- Նեւրոզներ, դեպրեսիա, անքնություն էպիլեպսիա
- Ալկոհոլամոլություն եւ թմրամոլություն
- Սեռական կյանքի հոգեբանական պրոբլեմներ
- Հոգեկան տագնապի հիվանդություններ

Բուժումը հոգեթերապիայով, բնական միջոցներով, առանձին դեպքերում դեղորայքով

Կարող եք դիմել Երեւանի թիվ 8 բուժմիավորման պոլիկլինիկա (Զեյթուն), նեւրոզների կաբինետ թիվ 7, ամեն օր, ժամը 9:00-18:00

Հեռ՝ 24-64-36, 28-72-60, 28-40-93

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան Նորքի 2-րդ զանգվածում, 5 հարկանի քառ. շենքի 4-րդ հարկում: Մակերեսը՝ 30/52 քմ, նկուղով, ջեռուցմամբ, բարվոք վիճակում: Գինը պայմանագրային, հնարավոր է փոխանակում 1 սենյականոց բնակարանի հետ՝ հավելավճարով:

Հեռ. 62-89-38

USAID

AED

Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ Կրթական զարգացման ակադեմիան (AED)

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը տեղի կունենա **մարտի 3-ին, ժամը 11:30-ին,** Թեթեյան կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ նախկին վարչապետ, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ

Արմեն Դարբինյանը,

ՀՀ վարչապետի խորհրդական

Արմեն Եղիազարյանը

Թեմա՝ **«Միջազգային տնտեսական եւ ֆինանսական գործընթացների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա»:**

USAID-ի FINCA ծրագիրը աշխատանքի է հրավիրում ֆինանսական ծառայողների: Թեկնածուները (ցանկալի է կանայք) պետք է ունենան խոսակցական, կազմակերպչական լավ կարողություններ եւ ուսուցանելու փորձ:

Անգլերենի եւ համակարգչի իմացությունը պարտադիր չէ: Նախապատվությունը տրվելու է բարձրագույն կրթություն եւ անձնական բիզնեսի փորձ ունեցողներին: Ինքնակենսագրությունները (ռեզյումեները) ընդունվում են մինչեւ 10.03.2000 թ., հետեւյալ հասցեով՝

Կոլխոզնիկների 1, տուն 103

(պետական հանրախանութի շուկայի եռեւի մասում):

FINCA-ն կզանգահարի միայն հարցազրույցի հրավիրվողներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ

Ֆիրման առաջարկում է հետաքրքիր, եկամտաբեր եւ անկախ աշխատանք: Անկախ ասելով նկատի ունենք աշխատանք առանց վերադասի եւ առանց որոշակի աշխատաժամերի: Ձեր եկամտի չափը կախված է լինելու ձեզանից եւ հրավիրողի հետ համագործակցության աստիճանից: Անհրաժեշտ գիտելիքներ կարող եք ձեռք բերել կազմակերպվող մեկշաբաթյա դասընթացներում: Մեր հեռախոսահամարն է՝ 39-09-36

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում եգիպտոսի Արաբական Հանրապետության դեսպանությունը հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներին կատարյալ տիրապետող վայելչատես քարտուղարուհու կարիք ունի, համակարգիչներով աշխատելու հմտությունը պարտադիր է:

Ցանկացողները կարող են ներկայանալ հարցազրույցի, ս. թ. մարտի 1, 2 եւ 3-ին, ժամը 15:00-17:00, հետեւյալ հասցեով՝ Երեւան, Սեբաստիի փող. 6ա:

Հեռ.՝ 226755, 220117

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

«Սիդա» անհատական ձեռնարկությունը՝ գրանցված 1995 թ. պետռեգիստրի Աբովյանի բաժանմունքում: Գրանցման համարը՝ 16.020.00115, վկայականի համար՝ 011074:

Ձեռնարկության հետ կապված հարցերը պարզել երկամսյա ժամկետում: Դիմել ք. Աբովյան, Նարեկացու փ. թիվ 41: Հեռ.՝ 3-12-15

ՓՆՏՐՈՒՄ ԵՄ

Հ Ա Ր Ա Զ Ա Տ Ն Ե Ր Ի Ս

Իմ անունը **Էդմոն Միգիրդիչյան** է: Ես ապրում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հորս անունը **Անդրանիկ Միգիրդիչյան (Մկրտչյան)** էր: Ես փնտրում եմ իմ հորաքրոջը, որը, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հեռանալով Բուլղարիայի Պլովդիվ քաղաքից, հաստատվել է Հայաստանում: Հորաքրոջս անունը կամ Լուսաբեր է կամ Աննա: Նրա կամ նրա երեխաների մասին որեւէ տեղեկություն ունեցողներին խնդրում եմ դիմել որեւ Ռեյ Քլարկին, հետեւյալ հասցեով՝

Երեւան, Տերյան 74, ԱՄՆ գյուղատնտեսամթերքի գրասենյակ
Հեռ.՝ 56-00-14, 52-52-34
կամ՝ Սոս Ավետիսյանին, նույն հասցեով:

բացառիկ առաջարկություն

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐԻ կողմից

Երեւան - Եվրոպա - Երեւան սկսած $525*

Երեւան - ԱՄՆ - Երեւան $695*

Երեւան - Լատինական Ամերիկա - Երեւան սկսած $ 990*

Լոնդոնում Ձեզ կդիմավորի և կաջակցի Բրիտանական Ավիաուղիների հայախոս աշխատակազմը:

*Գները գործում են մինչև մարտի 31-ը համապատասխան պայմաններով:

BRITISH AIRWAYS
The world's favourite airline

Երեւան, Սայաթ-Նովա 10, հեռախոս 521383, 528220

ՍՊՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Հեռ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1211 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 29. 02. 2000 Գինը՝ 100 դրամ